

Հ. Ս. Խ. Հ.

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ

(ՈՒՍՄԱՆ Ա. Բ. Գ. Դ. ՏԱՐԻ)

375
Ծ-98

ՅԵՐԵՎԱՆ 1927 թ.

14.05.2013

0120-101

Հ. Ս. Խ. Հ.

ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՏ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

375
S-98
08

ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ Ա. ԱՍՏԻՃԱՆԻ ԴՊՐՈՑԻ

(ՈՒՍՄԱՆ Ա. Բ. Գ. Դ. ՏԱՐԻ)

1008 3071
36587



ՅԵՐԵՎԱՆ 1927 թ.

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ I ՏՊԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 4299
ԳՐԱՌԵՊ. 316 Բ. ՏԻՐԱԺ 3000.

ԱՌԱՋԱԲԱՆ

Պետդիտխորհի նոր ծրագրերը յերրորդ տարին է, ինչ զործադրվում են Սորհրդային Հայաստանի դպրոցներում և այդ կարճ ժամանակվա ընթացքում նրանք արդեն յերկրորդ անգամն է, ինչ վորոշ փոփոխություն են յենթարկվում: Այս հանգամանքը թեպետ կարող է արգարացի դժգոհություն առիթ հանդիսանալ մեր մասնագիտական ուսուցչության համար, փորը պահանջում է վերջապես դպրոցական աշխատանքի բովանդակության ու մեթոդների կաշտնացում, բայց դա անխուսափելի է անհրաժեշտ է, յեթե ի նկատի ունենանք այն յուրահատուկ ու բացառիկ պայմանները, փորոնց մեջ ստեղծվում ու ձևավորվում են մեր աշխատանքային դպրոցի ծրագրերը:

Յեթե Սորհրդային աշխատանքային դպրոցի կառուցման ընդհանուր սկզբունքները, խնդիրներն ու աշխատանքի բովանդակության ընդհանուր սկզբունքները սկզբից և յեթ պարզ են յեղել ու վորոշ, նույնը ասել դպրոցի աշխատանքի կոնկրետ բովանդակության՝ ծրագրի մասին չի կարելի: Դրանով պետք է բացատրել այն յերկար դեղերումները, փորձերն ու սայթաքումները, փորը կատարում են Սորհրդային մանկավարժական միտքն ու ժողովրդական կրթության օրգանները ծրագրային փորձումների ասպարեկում:

1923 թ. Պետդիտխորհի ծրագրերի սխեմայի հաստատվումը պետք է մի պատմական շրջման կետ համարել ծրագրային գործում: Յերկար փորձումներից ու սխալներից հետո, վերջապես հնարավոր է յինում ստեղծել ծրագրերի յսորացման մի այնպիսի սկզբունք, փորը յինելով մարքսիստական՝ համապատասխանում է մեր աշխատանքային դպրոցի առջև դրված խնդիրներին: Պետդիտխորհի ծրագրերի կառուցման ընդհանուր սկզբունքներն արդեն մասնագիտական ուսուցչության սեփականություն են դարձել և դրանց մասին յերկարելու կարիք չկա: Թվենք միայն այդ հիմնական սկզբունքները. «Ծրագրերի հիմքում ընկած է մարդկանց աշխատանքային գործունեության ուսումնասիրությունը, վորի (գործունեության) հիման վրա զարգանում է հասարակական կյանքը և վորի էությունը՝ բնությունը մարդկանց կարիքներին հպատակեցնելն է»: Այս սկզբունքից էլ բխում է այն յերեք սյունյակների (բնություն, աշխատանք, հասարակություն) փոխհարաբերությունը, վոր կային այդ ծրագրերի առաջին յամրագրությունների մեջ: Ծրագրերի յերկրորդ հիմնական սկզբունքը, փորը սերտորեն կապված է առաջինի հետ, դա կոմպլեքսային սխեման է, վոր համաձայն մենք ուսումնասիրության առարկա յենք դարձնում վոչ թե նախկին դպրոցական առարկաները, այլ յրական կենսական յերեկություններն յրենց կոնկրետ բարդությունով, փոխհարաբերությամբ ու զարգացմամբ: Ահա այն յերկու հիմնական սկզբունքները, վորոնք տրամադծորեն տարբերում են մեր ծրագրերը հին դպրոցի ծրագրերից: Արանցից էլ բխում են մեր ծրագրերի արդիականություն, տեղայնություն:

ու մի շարք այլ նման կարեւոր խնդիրներ, վորոնց վրա չարժե աշխատել կանգ առնել:

Բայց հենց առաջին տարվա վորձերը ցույց են տալիս, վոր ծրագրերը կյանքում կիրառելու առջև մի շարք դժվարություններ են կանգնած: Այդ դժվարություններից մի մասը բղխում է անմիջապես իրենցից՝ ծրագրերից մի այլ բաժինն ընկնում է ծրագրերը կիրառողներին՝ ուսուցչության վրա: Առաջին կարգի դժվարություններից նախ և առաջ պիտի հիշատակել այն, վոր ծրագրերը թե իրենց ծավալով և թե հոճախ մատուցվող նյութի վորակով դժվարամարս ու անմատչելի էլին մասսայական դպրոցի համար: Թե Ռուսաստանում և թե մեզ մոտ Հայաստանում ծրագրերի հետագա վերամշակման աշխատանքը գլխավորապես գնում է այդ ուղղությամբ՝ նրանց կրճատման և պարզեցման (ծրագրերի խորացման ընդհանուր սկզբունքն ու ընդհանուր բովանդակությունն ի հարկե միշտ ել մնում է անփոփոխ): Բայց պետք է ասել, վոր այդ ուղղությամբ առանձին մեծ փոփոխություններ չեն կատարված և առանձին հույսեր ել չպիտի ունենալ, վոր կարող են կատարվել, դա բացատրվում է այն հսկայական խնդիրներով, վոր կանգնած են մեր աշխատանքային դպրոցի առջև և վորոնց լուծմանը գոնե միևնույն չափով պետք է մասնակցի նաև Ա. ատարձանի դպրոցը, վորի առջև խնդիր է գրված վոչ միայն յերեխաներին տարրական դրագիտություն տալ, այլ և սղնիսը պատրաստել բնական ու հասարակական յերեխայինքերի գեթ տարրական ըմբռնման համար: Այստեղից պարզ է, վոր մեր հետագա աշխատանքները պետք է ընթանան վոչ միայն և վոչ այնքան ծրագրերի կրճատման ու պարզեցման, վորքան մեր դպրոցական աշխատանքի ռացիոնալիզացիայի՝ դպրոցական տարին յերկարացնելու, յեղած ժամանակն ավելի ինտենսիվ ու խելացիորեն ոգտագործելու ուղղով և այլն:

Մի այլ տիպի դժվարությունն ել այն եր, վոր ուսուցիչն առաջին անգամ տեղերում ստանալով ծրագրերի ուրվագիծը, վորին պետք է կոնկրետ բովանդակություն տար ու հարմարեցնել տեղական պայմաններին, — բայց չբուսանալով վոչ մեթոդական ցուցմունքներ, վոչ ել հաճախ համապատասխան դասագրքեր ու ձեռնարկներ, հաճախ գլուխը կորցնում և լավագույն դեպքում միայն ձեռնարկն վերաբերմունք եր ցույց տալիս գեպի ծրագրերը, գալը ցում բառացի կերպով աշխատելով անցնել ամբողջ ծրագրերը: Ընդդէմ մեր ծրագրին ուսուցչից մեծ ինքնուրույն, ստեղծագործական աշխատանք և պահանջում, բայց դա կարող է իրականանալ մի կողմից տեղերում ուսուցչության կողմից աշխատանքի միջոցով, մյուս կողմից ել կենտրոնից վորոչ մեթոդական և այլ ոժանդակություն միջոցով: Ներկա վերամշակված ծրագրերն այդ տեսակետից վորոչ գյուրություններ են բնծեռնում ուսուցչին: Այստեղ ամեն մի թեմայի համար տրվում է հատուկ մեթոդական բացատրական, բացի ընդհանուր ծրագիր—սխեմայից, տրվում է նաև առանձին ուսուցչությաններին ու գիտելիքների ծրագրեր:

Այժմ հրատարակվող ծրագրերի մեջ կատարված է մի այլ տեսակետից ընդգծվող փոփոխություն, վորը նույնպես նշանավոր չափով կհեշտացնի ուսուցչի աշխատանքը. դա յերեք սյունյակներն վերացումն է, սյունյակներ, վորոնք հաճախ ուսուցչին խանգարում են նյութը արամարանական և բնական հաջորդականությամբ մշակելու և յերբեմն առիթ էլին տալիս այնպիսի կուր-

յուցների, յերբ ուսուցիչն ամբողջովին մշակում է մի սյունյակը, ապա անցնում հետեւյալին և այլն: Այժմ ծրագրերի նյութը արվում է ամբողջական տեկտոսով, վորտեղ բնության, աշխատանքային և հասարակություն վերաբերող ելեմենտները հյուսված են բնական հաջորդականությամբ:

Մեր ծրագրերի կիրառման ամենախոշոր բացերից մեկն ել այն է, վոր մասսայական ուսուցչությունը դրանց մոտեցել և վոչ թե իրապես աշխատանքային, այլ ուսուցողական դպրոցի տեսակետից: Յեթե մեր ծրագրերի հիմքում դրված է մարդկանց աշխատանքային գործունեության ուսումնասիրությունը, վերջինս մեծագույն մասամբ հասկացվել և վորպես լոկ կրավորական ուսումնասիրություն. այդ աշխատանքային գործունեությունն ու կյանքը հաճախ «ուսումնասիրվել» և դպրցի չորս պատերի մեջ՝ դրքերի ու ուսուցչի պատմածի հիման վրա, լավագույն դեպքում այդ կյանքն ուսումնասիրվել և անմիջական գիտողության (եթե ուրիշներ և այլն) միջոցով. բայց այս ստատիստիկ վրա կանգնած մնալով, մեր դպրոցը մնում է զուտ ուսուցողական, լավագույն դեպքում իլյուստրատիվ, բայց վոչ աշխատանքային: Մեր դպրոցն աշխատանքային կարող է դառնալ միայն այն դեպքում, յերբ նա վոչ միայն ուսումնասիրի իր շրջապատի աշխատանքային գործունեությունն ու կյանքը, այլ և մասնակցի, միջամտի այդ կյանքին՝ ցանկալի ուղղությամբ այն փոխելու համար: Այսպիսով մեր ծրագրերը պետք է կազմակերպեն վոչ միայն աշակերտի ուսուցումը, այլ և նրա արտադրական ու հասարակական աշխատանքը: Այժմ այդ իրապես աշխատանքային դպրոցի հանապարհի վրա յեն կանգնած վոչ միայն հատ ու կենտ ցուցադրական փորձնական դպրոցներ, այլ և բազմաթիվ «շաքային» մասսայական դպրոցներ, և այդ ուղին և, վորը պետք է վերջիվերջն բռնեն մեր բոլոր դպրոցները: Դժվարություններ չառ կան այդ հանապարհի վրա, բայց մեր ժամանակում չի, վոր պետք է վախենանք այդ դժվարություններից: Վերամշակված ծրագրերում այդ ուղղությամբ նույնպես վորոչ աշխատանք և կատարված ուսուցչի գործը գյուրացնելու համար. ըստ հնարավորության չեղաված են այն մոմենտները (թե բուն ծրագրերում, թե մեթոդական բացատրականներում), յերբ անհրաժեշտ ու հնարավոր և մշակվող կոմպլեքսի հետ կապված ու նրանից բղխող այս կամ այն արտադրական կամ հասարակական աշխատանքը կազմակերպել ու կատարել: Մեր դպրոցն ուսուցողականից աշխատանքային դարձնելու նպատակով հենց կատարված է ծրագրային նյութերի վորոչ փոփոխություն ու վերագոտարկում. չվերամշակված ծրագրում 3-րդ խմբի ուսումնասիրության կենտրոնն եր գլխավորապես մեր գաղաւն ու մեր յերկիրը, իսկ 4-րդ խմբինը ԽՍՀՄ և կապիտալիստական յերկրները, ստացվում եր մի այնպիսի գրություն, վոր հենց այն հասկում, յերբ յերեխան արդեն քիչ թե չառ հնարավորություն և ստանում արտադրական և հասարակական աշխատանքի մասնակցելու, մենք դպրոցի ուսումնասիրության որ յեկտն այնքան ենք հեռացնում յերեխայից (գաղաւ, յերկիր, ԽՍՀՄ), վոր նա անմիջապես նաև մասնակցել ուսումնասիրվելիք աշխատանքային գործունեության չի կարող. վերամշակված ծրագրում այդ անհրաժեշտությունը վերանում է նրանով, վոր յերբորդ խմբում ել ինչպես և յերկրորդում—միայն չառ ավելի խորացրած ու հիմնավոր—ուսումնասիրության կենտրոնը մնում է գյուղն իր անտեսությունը, կազմակերպություններով ու կենցաղով, իսկ

դավառին, յերկրին վերաբերող խնդիրները քննվում են չյուզին վերաբերող նյութերին զուգընթաց: Այսպիսով ավելի մեծ հնարավորություն և ստեղծվում յերկրաչին կապելու իր անմիջական շրջապատի արտադրական ու հասարակական կյանքին: Նույնը, թեպետ նվազ հաջողութեամբ, կատարված և նաև 4-րդ խմբի նկատմամբ, վերաբերող ՍՍՀՄ-ի ուսումնասիրութեան հետ զուգընթաց և մասամբ ևլ նրան հիմք ծառայեցնելով, տարվա սկզբից և յեթ պետք և կազմակերպել աշակերտների ինքնուրույն հետազոտական, արտադրական ու հասարակական աշխատանքները:

Մեր դպրոցն աշխատանքային դարձնելու՝ ուսուցչի ջանքերին վերջ չափով կոչնի և այն, վեր մենք տալիս ենք աշխատանքային և հասարակական-կազմակերպչական ունակութեանների ծավալն ըստ խմբերի:

Մի ուրիշ խնդիր, վերն անմիջապես կապված և դպրոցում արտադրական և հասարակական աշխատանքը կազմակերպելու հետ, դա աշխատանքի ծրագրման և հաշվառման խնդիրն է. դրա վրա նույնպես ավելի յե ուշադրութեան դարձված այս ծրագրերում, միշտ շեշտելով ծրագրման և հաշվառման մոմենտները և դրա մասնակցութեան այն չափն ու ձևը, վերը պիտի ունենան յերեխաները սկսած հենց առաջին խմբից:

Ծրագրերը կազմված են՝ ի նկատի ունենալով գյուղական դպրոցը, քանի վեր Հայաստանը գերազանցորեն գյուղատնտեսական յերկիր և, վերի մի շարք քաղաքներն իրենց տնտեսութեամբ ու կենցաղով փաստորեն խոշոր գյուղեր են ներկայացնում: Բայց յերեխայի մեր ծրագրերի տեղաշինութեան ելակն սկզբունքից, ինքն ըստ ինքյան հասկանալի յե, վեր արդյունաբերական բրնույթ ունեցող վայրերում, հատկապես յերկրորդ և յերրորդ տարում գրադրոցի ուսումնասիրութեան կենտրոնը պետք և լինի վոչ թե գյուղը, այլ քաղաքն իր տնտեսութեամբ և կենցաղով. այդ դեպքում յերեխաները գյուղի հետ կծանոթանան (գլխավորապես աշանը և դարնանը կազմակերպված) երա-կուրսիաների, համապատասխան պատկերների, ընթերցանութեան և այլ միջոցով: Պարզ և, վեր այս դեպքում ուսուցչից շատ ավելի ինքնուրույն ստեղծագործական աշխատանք և պահանջվում, վերջելու թե քաղաքի կյանքի վեր կողմերի վրա և ինչ չափով պիտի կանգ առնել:

Ա. ԽՈՒՄԻ

Ա. ԱՌԱՋԻՆ ՈՐԵՐԸ ԴՊՐՈՅՈՒՄ.

Ծանոթություն յերեխաների հետ: Ի՞նչ են անում հիմա տանը. ինչ են արել յերեխաները ամառը (աշխատանքային պրոցեսներ, ընթերցանութեան, հաշիվ և այլն):

Պարզել յերեխայի ընտանիքի կազմը: Ի՞նչ խաղեր և յերգեր գիտեն յերեխաները: Զբոսանք, նրանց խաղերի և ժամանցի վայրերը: Պագերի կազմակերպումը դպրոցում: Եթեկուրսիա դեպի շրջակայքը, բույսերի և կենդանիների դիտողութեան, յերեխաներին հետաքրքրող յերեույթների մասին թեթև գրույց: Նյութեր ժողովել դրադմունքի սենյակը դարգարելու համար: Ծանոթանալ դպրոցական կարասիքին և շենքին և նրանցից ոգտվելու ձեւերին: Վոտքեր մաքրելու տեղը, շորեր կախելու տեղը, ինչպես ոգտվել արտաքնոցից: Ինչ պիտի անել դպրոցում: Զբույցի միջոցով պարզել աշխատանքի կազմակերպութեան անհրաժեշտութեանը, չգրազվել, կուտակված չընտան, ժամանակին դպրոց գալ, խոտաքած իրերը բերել կոլեկտիվի համար:

Ծանոթանալ մյուս խմբերի աշխատանքներին: Մշակել դպրոցական աշխատանքների հետ կապված կարգապահական պարզ կանոններ: Ծնողների մասնակցութեանը աշխատանքի կազմակերպման դործում: (Զբույց և աշխատանք նրանց հետ):

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ.

Սոցիալական յարաբերութեան հրահանգի համաձայն դպրոցական բուն դրադմունքները թե քաղաքներում և թե գյուղերում պետք և սկսել սեպտեմբերի 20-ից:

Ընտանեկան ազատ միջավայրից բոլորովին նոր բնկերների, ստարտի շրջապատի, անտուր դրադմունքների ու կենցաղի մեջ հանկարծակի բնկնելը շատ հաճախ ճնշում և յերեխաներին և յուրւմ նրանց կենսութեանութեանը և ախտիութեանը: Ուստի անցումը ընտանիքից դպրոց պետք և լինի աննկատ, հարկավոր և ստեղծել բնական հանգամանքներ՝ խաղերի, անկաշկանդ դրսանքների ու գրույցների միջոցով: Թե դասարաններում և թե դրսանքների ժամանակ գրույցի նյութ պետք և դարձնել յերեխաների ամառային խաղերը, ժամանցները, դրադմունքներ՝ վարժեցնելով յերեխաներին ազատ արտահայտվելու, ի հարկե, իրենց բարբառով:

Քանի վեր հենց առաջին օրերից հարկավոր և կարգավորել նորեկների նիստ ու կացը դպրոցում, ուստի և բացառապես այդ նպատակով ևլ այս թեմայում նշանակված և ծանոթանալ դպրոցի շենքին, կահ կարասիքին:

Աշակերտները դասարանական կազմակերպությունը պետք է արտահայտվի ամենաարագ փաստերով (որ. չարմիկել, յերբ մի հարց է քննվում, դասարանում կուտակված չնստել, ժամանակին դպրոց դալ, պահպանել և դասափորել հավաքած նյութերը և այլն)։ Այդ մոմենտից դասարանական կազմակերպությունը հետզհետե և անընդհատ սկսում է զարգանալ՝ համապատասխան յերեխաների հասկացողության և կարողության, յեղնելով այն հիմնական մտքից, զոր կոլլեկտիվ աշխատակի համար անհրաժեշտ է կարգ ու կանոն։ Այս յեղբայրացությունը հանելիս ուսուցիչը կարող է աշակերտներին առաջ դնել վորոշ գործնական խնդիրներ, որ. հետևել ա. խմբի յերեխաների հաճախումներին, պարզել բացակայությունների և ուշացումների պատճառները։

Բ. ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ.

Ինչպիսիք են հիվանդանում յերեխաները և նրանց ընտանիքի անդամները։ Հիվանդ և անողջ մարդ։ Նրանց ընդհանուր նկարագիրը։ (Ձերմություն, տրամադրություն, ախորժակ և այլն)։

Տարափոխիկ հիվանդությունների մասին դադարաբար տալ։ Տարրական տեղեկություններ մարդու մարմնի մասին՝ զգայարաններ. տարափոխիկ հիվանդությունների պատճառները։ Ինչպես պաշտպանվել վարակիչ հիվանդություններից (ծաղիկ ծեծել, ախտահանություն, առանձնացում)։ Առողջապահական աշխատանքներ դպրոցում և նրանց կիրառումը ընտանիքում և փողոցում։ Ձեռքերի, յերեսի, յեղունդների, մազերի, հազուադեպ և անկողնի մաքրություն։ Առողջապահական խաղեր և մարզանք։ Քնելու, ուտելու և նստելու առողջապահական կանոններ։ Լույս, մաքուր ոդ և ջուր։ Ծնողների աշխատակցություն, յերեխաների առողջապահության գործում՝ տանը, դպրոցում և փողոցում։ Յերեխաների բժշկական քննություն, նրանց քաշը և հասակը։ Յերեխաների մասնակցությունը դպրոցի դեղերի պահարանի կազմակերպման գործում։ Առողջապահական սեկցիայի կազմակերպումը դասատանը։

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ.

Ա. աստիճանի դպրոցի ամենահիմնական խնդիրներից մեկը յերեխաների առողջության պահպանությունն է։ Դրա համար անհրաժեշտ է հենց սկզբից հոգ տանել յերեխաների մեջ զարգացնելու առողջապահական ունակություններն ինչպես դպրոցում, այնպես և ընտանիքում ու գրտում։ Ուստի այս թեման հաճախակի օտիթներ պետք է ստեղծի չփվելու ծնողների հետ և խորհուրդներ ու հրահանգներ տալու նրանց, որ. յերեխաների քնի տեղի ու վայրը, սնունդի, զգեստի, մարմնի, անկողնի, մաքրության վերաբերյալ և այլն։

Դպրոցական ամենուրեք աշխատանքների ընթացքում (ոգանցքը բանալ, հատակը, դրատախտակը, նստարանները թաց չորով սրբել, չորերը, մատները, մազերը մաքուր պահել, ուտելուց առաջ ձեռները լվանալ և այլն) նորեկների մեջ պետք է ամրապնդել այն միտքը, զոր մաքրությունից և կախված առողջությունը, ուստի և անհրաժեշտ է, զոր բոլորն էլ հետևեն մաքրության։

Վորպեսզի առողջապահական տարրական կանոնները դառնան ունակություն, պետք է համառ կերպով հետաժող գրանց կատարմանը վոչ միայն այս Թեման անցնելու ժամանակ, այլ ամբողջ տարին։ Գործին մեծ շափով կնպաստի առողջապահական սեկցիայի գործունեությունը։

Գ. ՄԻՋԱՎԱՅՐՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՇԽԱՆԸ ՅԵՎ ՋՄՐԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆ.

Դիտել բնության յերեույթները աչնանը. որվա կարճանալը, ամպամած յերկինք, անձրևներ և քամի։ Նկարներով կազմել բնության որացույց։ Ի՞նչ են անում հիմա յերեխաները տանը։ Ի՞նչ են անում ընտանիքի անդամները։ Եքսկուրսիա դեպի աշխատանքի վայրը (բերքի հավաքելը)։ Կազմակերպել մեծերին ոգնելու գործը։ Դաշտից, անտառից, ալդուց և բանջարանոցից բերած բույսերից, և կենդանիներից ու հանքերից սկիզբ դնել բնության անկյան։ Բնակարանի, դպրոցի և այլ շենքերի հարմարեցումը դալիք ձմռանը. տպակներ զցելը, ձեղքեր ծածկելը, վատարանները կարգի բերելը։ Սընդի, հազուադեպ և վառելիքի պատրաստություն ընտանիքում։ Ի՞նչպես են պատրաստվում ձմռանը հարմարվելու բույսերն ու կենդանիները։ Տերևների գունաթափություն, տերեւթափ, թուշունների չուն, միջատների քուն մթնունը։

Ի՞նչ ապրանք և վաճառել ընտանիքը։ Ի՞նչ է գնել ընտանիքը կոտորատիլից և մասնավորից. դիտողություններ ձմռան վերաբերյալ. բնության յերեույթներ. ծնողների հետ զրույց (ինչ չափով յերեխաները պետք է ոգնեն ծնողներին)։

Կազմակերպված մասնակցություն հոկտեմբերյան և նոյեմբերյան տոնակատարություններին (հոկտեմբերիկների աշխատանքների մասին զրույց)։

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ.

Աչնան թեման անցնելու անհրաժեշտ է կազմակերպել մի քանի եքսկուրսիաներ դեպի բնություն՝ դիտելու յեղանակի և դրա հետ կապված փոփոխությունները (հատկապես բույսերը) և դեպի գյուղացու զբաղմունքի վայրերը՝ ծանոթանալու նրա դաշտային, բանջարանոցային, ալդու, կալի, մատանի, ջրաղացի և մյուս տիպի աշխատանքներին։

Խիստ ցանկալի յե, զոր եքսկուրսիաների ժամանակ յերեխաները անմիջապես չփվեն հենց աշխատավորների—իրենց հետ՝ յսելու նրանցից զանազան բացատրություններ սեզոնային կոնկրետ աշխատանքների մասին։ Նրանց զրույցներն ալելի ալդու, տպավորիչ կլինեն փոքրիկների համար։

Եքսկուրսիաների ընթացքում պետք է հավաքել բուսական, հանքային, կենդանական զանազան նմուշներ և դպրոցում կարգի բերելով հիմք դնել բնության անկյան, ինչպես հիշված է ծրագրում—այս թեմայի մեջ։

Ուշ աչնան, յերբ ձմռան նշաններն արդեն յերեսն են գալիս, անհրաժեշտ է դարձյալ մի քանի եքսկուրսիաներ կազմակերպել, անձամբ դիտելու բնության փոփոխությունները—ցրտաչունչ քամիները, դաշտերի և ալդիների ամալացումը և մարդկանց նախապատրաստական աշխատանքները ձմռան համար, այլ խոսքով, նրանց պայքարը բնության դեմ։ Յերեխաները

պետք է գլխի ընկնեն, վարձակառուներն աշխատանքները փոփոխություններին հետևանքով փոխվում են նաև ընտանիքի կյանքը: Անշուշտ, զբույցի նյութ պետք է դարձնել նաև զարոցի նախապատրաստությունները ձմռան համար ու կոնկրետ ցույց տալ արվածը:

Սույն թեմային զուգադրվում են Հոկտեմբերյան Հեղափոխության և Հայաստանի խորհրդայնացման տոները, վերանայ առթիվ կազմակերպված զարոցական հանդեսներին պետք է մասնակից դարձնել նաև ա. խմբի յերես-խաներին:

Դ. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՁՄՐԱՆԸ.

Դպրոցի աշխատանքները ձմռանը: Սենյակներ տաքացնելը և առողջապահական աշխատանքները—մաքրություն և ոգափոխություն: Հոր, մոր և հարևանների ձմռան աշխատանքները: Յերեսխաչի աշխատանքները ընտանիքում անասունների խնամքի գործում: Դիտողություններ նրանց կյանքի վերաբերյալ: Ինչ վայրենի կենդանիներ են պատահում ձմռանը: Ձմերուկ թռչունները. դիտողություններ սրանց ապրուստի չուրջը (նրանց պաշտպանությունը):

Կազմակերպել թռչունների պաշտպանության գործը. ուսուցչի ղեկավարությամբ ազատ ոգում խաղեր կազմակերպել: Տաք և ցուրտ սրեր. արևոտ և ամպամած սրեր. ջրերի սառելը, ձյան դիտողություն. եքսկուրսիա մոտակա վայրեր. բույսերը ձմռանը (կոկոններ, ձյան և հողի տակ ձմերուկ բույսեր ու կենդանիներ): Ճանապարհները ձմռանը: Ընտանիքից ով և գնացել քաղաք: Ինչ է վաճառել և ինչ է գնել քաղաքում: Ձմեռային յերեսխաչ ընտանիքում. ձմեռային հանդեսներ: Դպրոցը ծնողների հետ միասին համապատասխան աշխատանքներ և կազմակերպում յերեսխաչի ժամանցները համար:

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ.

Հիմնական ձգտումն աշտեղ ևս պետք է լինի յերեսխաչներին ըմբռնել տալ, վոր մարդու աշխատանքների փոփոխությունը ձմռանը՝ պայմանավորված է սեզոնի փոփոխությամբ: Ուսուցչի ոգնությամբ յերեսխաչները ծանոթանալու յեն մարդկանց աշխատանքների գործունեյության: Աշակերտի ընտանիքի և յուր աշխատանքը ձմռանը գլխավորապես վերաբերում է ընտանի կենդանիների խնամքին. աշտեղ հարկավոր է յերեսխաչներին նկատել տալ, վոր մարդը ցրտից պաշտպանում, կերակրում, հարմարություններ է ստեղծում աչն կենդանիների համար, վորոնցից ոգովում է: Նույնը կարելի է ստել ընտանի թռչունների մասին:

Ձյան գալը կենդանացնում է փողոցները, բակերը, հատկապես դպրոցական բակը: Դպրոցի պարտականությունն է կազմակերպել և հարկավոր ուղղությունը տալ մանկական խաղերին ու ժամանցին թե զարոցում և թե փողոցում ու տանը, քանի վոր խաղն աչ տարիքի յերեսխաչների համար շատ ցատկարակիչ ու կրթիչ է: Անհրաժեշտ է հարց հարուցել յերեսխաչների առաջ, թե ինչպես պետք է սպասարկել ձմեռային պայմանները և ընտելյուն հարստությունները՝ նոր խաղեր կազմակերպելու համար:

Ինչ վերաբերում է յերեսխաչների տնային ժամանցին, պետք է ծնողներին տալ համապատասխան ցուցմունքներ, մասնաշեղծով զբույցի նյութերը, յերգեր, ձևերի աշխատանքներ և այլն:

«Կյանքն ու աշխատանքը ձմռանը» թեմային պետք է հատկացնել մոտ 2 տախ: Քանի վոր ցուրտ յեղանակի պատճառով հաճախ հնարավոր չէ բացթյա աշխատանքներ կատարել և եքսկուրսիաներ կազմակերպել, ուստի հարկավոր է զարոցական զբաղմունքներն ոգտարծել այլ ուղղությամբ—ծանրանալ յեղվական (բանավոր ու գրավոր), թվարանական և այլ ունակությունների յուրացման վրա:

Այս թեմայի հետ պետք է ձգտել ոգտելու գրաճանաչությունը և թվարանությունից՝ յերկու տասնյակի սահմանում 4 գործարկությունների ուսուցումը:

Անհրաժեշտ է կազմակերպել հանդեսներ Լենինի մահվան և Փետր. Հեղափոխության առթիվ՝ մասնակից դարձնելով ա. խմբի աշակերտությանը: Հանդեսների նշանակության մասին նախապես պետք է խոսել և բացատրություններ տալ դասին, վորպեսզի հանդեսի ժամանակ խոսածները յերեսխաչ հասկանալ կարողանա:

ՅԵ. ԳԱՐՆԱՆ ՄԵՐՁԵՆԱԼԸ ՅԵՎ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆԸ.

Գարնան մերձեցման նշանները. արեկող տեղերի ձյան հալոցը. տաք սրեր: Արևի դիրքը յերկնակամարում: Պատրաստել տավակներ հալոցի ջրերի համար: Սերմերի ծլեցնելը կենդանի անկյունում: Կոկոններով ճյուղերի բացումը սենյակում և դիտողություն նրանց փոփոխությունների: Ընտանիքի նախապատրաստությունը գարնանային աշխատանքների: Գյուղատնտեսական գործիքների կարգի բերելը: Եքսկուրսիա գարնոց և հյուանոց դիտելու պատրաստվող և վերանորոգվող գործիքները:

Ընտանի կենդանիների և թռչունների վերաբերյալ դիտողություններ՝ տեսք, բուրդը, չարժումները և այլն: Անասուններին գոմից հանելը: Եքսկուրսիա մոտակա վայրերը դիտելու կոկոնների տեսքը, առաջին բողբոջները և առաջին միջատները, ձնծաղիկ հավաքելը:

Դիտել վերադարձող թռչուններին: Ինչ է պատրաստվում ցանել աշակերտի ընտանիքը այս գարնանը. կա՞ գրա համար սերմացու: Եքսկուրսիա գետի մոտան և պահեստ: Գարնանային խաղեր գլրոցի բակում և գյուղում:

Փետրվարյան և Կարմիր բանակի տոնակատարություններ:

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ.

Աշխատանքն անհրաժեշտաբար պետք է սկսել գարնանային բնության և առոյտ հասարակական—կենցաղային յերեվույթների դիտողությամբ: Տարվա այս յեղանակին կան բազմաթիվ հարմար մոմենտներ (հալվող ձյան ջրերի համար առվակ փորել, սերմեր ծլեցնելը կենդանի անկյունում, ճյուղերը բանալ սենյակում և այլն) յերեսխաչներին գնաղան գործնական աշխատանքների լծելու, ի հարկե, նրանց ուժերի սահմանում:

Բնության փոփոխութիւնները խաղերն եւ դասնում են սեզոնային :

Այս թեմայի ժամանակն ընկնում է մոտավորապէս մարտ ամսին : Յետեւ ինչ ինչ պատճառներով յերեխաները մինչ այդ լրիւ դրագետ չեն դարձել : Մայրենի լեզվից և թվաբանութիւնից, 1-20 թվասահմանը չեն յուարցրել, պետք է դեթ մարտին անպայմանօրէն այդ անել, վորպեսզի ապրիլ ու մայիս ամիսներին լեզվից ընթերցարանին անցնելով կարողալու վարժութիւնները բուսական ձեռք բերել և գրաւորի մէջ հմտանան, ինչպէս և մտնեն 100-ի թվասահմանը և մի շարք հաշվային նոր ունակութիւններ յուարցնեն :

2. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԳԱՐՆԱԼԸ .

Դիտել դարնան բնության աստիճանական դարգացումը : Դիտել ինչ կարգով են ծաղկում ու կանաչում պարտեզի ծառերը և խոտերը . կազմել ծաղիկների ժողովածու : Սովորել ամենատարածված բույսերի անունները և գրի առնել . կենդանի անկյունը փոխադրել դուրս . դարնանային աշխատանքները հողի վրա : Դպրոցական հողամասում կազմակերպել աշխատանքներ : Դիտել հողի խոնավութիւնը . փնտրել ծլող սերմեր :

Ծաղկոցի աշխատանքներ և սածիլ դնելը . մասնակցութիւն մեծերի ծառատունկի աշխատանքներին :

Պարզել հողի պարարտացնելու, սոռնները մաքրելու, սերմը դնելու և այլ աշխատանքների նշանակութիւնը : Եքսկուրսիա մի քանի աշակերտներին տնտեսութիւններ : Փեթակների դուրս հանելը և թուխս դնելը :

Գարնանային անձրեւներ : Կայծակ, կարկուտ : Ամպամած և պարզ սրբերի թիւիլը :

Սենյակների հարմարեցնելը դարնան . յուսամասեր բանալը, վառարաններ դուրս հանելը և մաքրել :

Թռչունների բուն շինելը և ձագեր հանելը : Նոր յերեացող կենդանիների և միջատների դիտողութիւն : Ծնողների հետ զրույց այն մասին, թե վորքան է ընտանիքի կենդանիների թիւիլ և ցանքսի չափը (թվական տվյալներով), անասունների արտա հանելը :

Խաղեր և զրոսանքներ :

Կազմակերպել դարնան տուն :

Մասնակցութիւն մարտի 8-ի և մայիսի 1-ի տոներին :

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ .

Գարնանն ընտանիքի աշխատանքային գործունեութիւնը դիտելիս պետք է յերեխաների ուշադրութիւնը դարձնել զրանց բազմազանութեան և շտապողակաւութեան վրա : Առաջնի միջոցով աշակերտները կրմբոնեն, թե ինչպէս կարելի չէ լայն չափով ոգտադործել բնութիւնը, իսկ յերկրորդի միջոցով այն, վոր մարդը իր բազմազան աշխատանքների մէջ պետք է ստեղծի վորոշ հաջորդականութիւն՝ հարմարվելով սեզոնի պահանջներին :

Այս թեման անցնելիս յերեխաները բազմաթիւ առիթներ ունին ֆիզիկական աշխատանքներ անելու, վորոնք արժեք կունենան միայն այն դեպքում, յերբ գրանք լինեն կազմակերպված, կապված անցնելիք նյութերի հետ : Ցանկալի չէ, վոր այդ սեզոնին աշակերտներն այցելեն հարեւան դպրոցը՝ ծանո-

թանալու դրա գարնանային գործնական աշխատանքներին և փոխանակել իրենց փորձն ու դիտողութիւնները :

Գարնանը յերեխաները համեմատաբար ավելի շատ եքսկուրսիաներ պետք է կատարեն, վորովհետեւ այդ սեզոնի հետ կապված և բնության կյանքի հարուստ արտահայտութիւնը և մարդկային աշխատանքի բազմազանութիւնը և ինտենսիւթիւնը :

Գարնան թեման պետք է ավարտել մայիսի 15-ին, հետեւապէս լեզվական և թվաբանական ունակութիւնները մինչ այդ ժամանակը յուարցված պետք է լինեն և տարեկան ծրագիրն ավարտած : Մայիսի 15-ից հետո հարկավոր է զրաւելի անցածի կրկնութիւններով, ամփոփումներով, տարեկերջի հաշվետու ցուցահանդէսով և ամառային աշխատանքները ծրագրելով :

Ե. ՀԱՇՎԵՏՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍ ՏԱՐՎԱ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Ցուցահանդէսի նյութ են լինելու՝ ա) բնութիւն, նրա դիտողութիւնները, որագրերը, նկարները, ժողովածուները : բ) Աշխատանք-կենդանի անկյուն, պատրաստած մոդելներ, ծելիւր և ձեռքի մյուս աշխատանքները : գ) Յերեխաների ձեռագրերը, կարգացած հոգիւածները, գործածած իրերը և գործիքները : դ) Ինչ նորութիւն և մտքերը դպրոցը յերեխաների և նրանց ընտանիքների կյանքում :

Աշխատանքներից պիտի դնել տարվա սկզբին և վերջինը, հեշտութեամբ համեմատելու համար :

Կազմակերպել կենդանի ցուցահանդէս-խաղերի, յերգերի, վոտանավորների, ընթերցանութիւն, դրամատիզացիայի, նկարչութիւն :

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ .

Դպրոցի տարեկերջին հաշվետու ցուցահանդէսում պետք է մասնակցի նաև ա. խումբը, առանց վորի դպրոցի աշխատանքների լրիւ պատկերը չի կարելի տալ՝ վոչ աշակերտութիւնը և վոչ էլ ծնողներին : Անշուշտ, այդ խմբի մասնակցութիւնը ցուցահանդէսին լինելու չէ համեստ, ինչպէս նրանց ուժերն են :

Պետք է ցուցադրել այն բոլորն, ինչ վոր հիշված է ծրագրում-գրաւոր աշխատանքները, ձեռք բերած առողջապահական ունակութիւնները դպրոցում և ընտանիքում, աշխատանքային ունակութիւնները և խաղերը :

Ինչ վերաբերվում է յերեխաների ամառային գործունեութեան ծրագրմանը, բնական և, վոր դա պետք է կապվի նրանց ամբողջ տարվա աշխատանքների ամփոփման հետ : Աշակերտների ամառային գործունեութեան ծրագրմանը անհրաժեշտ է իրազեկ պահել հասարակութիւնը, մասնավորապէս ծնողներին, վորպէսզի սրանք էլ աջակցեն յերեխաներին իրենց անելիքներում :

Բ. ԽՈՒՄԲ

Ա. ՅԵՐԵՄԱՆԵՐԻ ԿՅԱՆՔՆ ՈՒ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆ ԱՄՌԱՆԸ ՅԵՎ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Յերեմաները ծրագրում ամառային աշխատանքները փոքր են կատարել: Նրանց մասնակցությունը խոտհարքի, հնձի, կալի, ալգու, բոստանի և այլ աշխատանքներին:

Անասուններ արածացնելը: Ընտանիքի կատարած ամառային աշխատանքները: Յերեմաների ստացած տպավորությունները և պատկերներ ամառվա բնությունից, (շոգ, զով ուրեր, անձրևներ, կարկուտ, վոբոտ, կայծակ, լեռներ, գետ, ջրվեժ և այլն):

Յերեմաների ամառային արարքներն ու խաղերը—գրում գիշերելը, լուղը, ճամբորդությունները գյուղում, յայլայում, ամարանոցում:

Յերեմաների ժողոված իրերի կարգավորումը:

Անցյալ տարի ինչ կարգեր մտցրինք մեր դասարանում: Դպրոցական կյանքի կազմակերպումն այս տարի՝ կարգապահություն, դասարանի մարքություն, սարքավորման և այլ գործերի վերաբերյալ:

Աշակերտական կոոպերատիվին անդամագրվելը, դպրոցական կանոնների մշակումը և աշխատանքի բաժանումն ըստ խմբակների և անհատ աշակերտների: Հաշվառման սրագիր նշանակել ու խմբի ուղացումները, բացակայությունները և գործնական աշխատանքները:

Ծրագրում բնության գիտությունները—աշխատանքի բաշխումը խմբի աշակերտների միջև:

Դպրոցի և խմբի անելիքն ընտանիքում և գյուղում աշխատել:

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ

Ուսման Բ. տարում աշակերտների ամառվա հուշերին պետք է ավելի մեծ տեղ տալ, քան ա. խմբում, յերր նորեկները դպրոց բնկենելով տարված են լինում իրենց նոր միջավայրով և անցյալը, թեկուզ մերձավոր, քիչ է հետաքրքրում նրանց:

Բ. խմբում կարելի չէ կանգ առնել բնության գլխավոր յերեույթների և յերեմաների իրենց ու հասակավորների ամառային տիպի աշխատանքների վրա: Բայց նյութերի այն հաջորդականությունը, փոքր պահված և այս թեմայում, զաստատուն կարող է փոխել: Յերեմաների գիտություններն ամառվա աշխատանքների ու բնության պատկերների մասին ազատ կլինեն, յեթե հանդես չբերվեն նրանց սեփական վառ ասորումները: Այդ և պատճառը, վոր տվյալ թեմայում բերված են նախ յերեմաների արարքներն ու խաղերը: Յեթե ուսուցիչը զրույցին այնպիսի ընթացք տա, վոր իրենց աշխատանքների

մասին խոսելիս յերեմա յերեմաների հնարագիտությունը և ստեղծագործական կարողությունները, այդ գեղքում կարելի կլինի յերեմաներին ավելի լավ ճանաչել և ուրեմն ավելի նպատակահարմար ձևով ծրագրել հետագա աշխատանքները:

Ուսման Բ. տարում յերեմաները կարող են ավելի մեծ չափով մասնակցել բնդհանուր դպրոցական կազմակերպություններին: Այս բանին հարկավոր է նրանց հետզհետե վարժեցնել և ակտիվությունը հրահրել, ամառը ժողոված իրերի կարգավորման, խմբի կարգապահական կանոնների, որագրերի մշակման, բնության գիտություններն իրենց մեջ բաշխելու միջոցով, իսկ տարեկիցին նախ ծանոթացնել, թե ինչ աշակերտական կազմակերպություն կա և ինչպես են կազմակերպված բարձր խմբերի իրենց բնկերները:

Բ. ԱՇԽԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Յերեմաների աշխատանքը դպրոցական հոգամասի վրա:

Աշխատել դյուղացիք ինչ աշխատանքով են զբաղված գաղտում, պարտիզում, այգում և սարում: Յերեմաների մասնակցությունն այդ աշխատանքներին: Մասնակցություն բերել տոնին:

Այս տարի ինչ մթերքներ են ստացվել արտից, այգուց, բանջարանոցից և սարից: Պտուղների, հացահատիկի, բանջարեղենների և կաթնամթերքների լավ աճպանելու միջոցները: Որինակելի մասանի պայմանները: Պահածոներ պատրաստելը, աղ ու թթու դնելը: Գինի, դոշար պատրաստելը:

Լավ և վատ մշակված տնտեսությունների համեմատությունը: Ուղքեր են աշխատել բանջարանոցում, պարտիզում, այգում:

Բամբակի չանաքը, հավաքումը և մաքրումը: Որագիր պտուղների և բանջարեղենի հավաքելու ժամանակի մասին: Պտուղների կազմությունը, գույնը, համը, հոտը: Պտուղները, պայարները, սոխարմատները և այլ արմատապտուղները իրեն սննդատու նյութեր: Գյուղից վաճառքի հանվող մթերքները: Քաղաքն ինչ և տալիս գյուղին: Կոոպերատիվն աշխատել: Մասնավոր խանութների և կոոպերատիվի գները:

Պարտիզի, այգու, բանջարանոցի վնասատուները աշխատել: Պայքար դրանց դեմ: Յերեմաների մասնակցությունը վնասատուների դեմ մղվող պայքարում:

Ինչ նախապատրաստություններ են պետք ձմեռվա ցրտերից ապրիլ և բանջարանոցը (մարդերը, թփերը, ծառերը) պաշտպանելու համար:

Աշխատանքանի վիճակը մինչև ձյունով ծածկվելը: Դիտել հացահատիկների սերմերը, կազմությունը, ծլելը:

Դիտողություններ աշխատել յեղանակի, տաք ու ցուրտ քամիները, յեղյամ, ցրտաշունչ որեր, տեղումներ, ամպեր:

Ջրաղաց—ալյուր պատրաստելը, հաց թխելը:

Բնակարանը ձմրան պայմաններին հարմարեցնելը: Մշակել լողուններ քնակարանի և դոմի առողջապահական պայմանների մասին և կախել գյուղի խրճիթ—բնկերքարանում:

Յեթե դպրոցը հողամաս ունի, պետք է անպատճառ համապատասխան աշխատանքներ կազմակերպել աշխատել, նաև Բ. խմբի աշակերտներին մասնակցություն տալ, թողնելով, վոր վերջիններս ծրագրեն ու վորոշեն իրենց մասնակցությունը չափը և ձևը աշխատանքներում: Յերեսաները նույն բաներն անում են և իրենց սեփական անտեսություններում, բայց այստեղ շատ հասարակական ռեզիդենտներ են լինում աշխատողները, հետևապես անհրաժեշտ է դառնում խոսել և պայմանավորվել ծնողների կամ խնամակալների հետ՝ ուժից վեր չճանարաններու փոքրերին:

Յեթե դպրոցը հողամաս չունի կամ հնարավորություն չունի մշակելու իր սեփական միջոցներով, այս դեպքում դպրոցը կարող է մի քանի դյուզատուն տեսական աշխատանքներ կազմակերպել տանը, վորոնց ընթացքում յերեսաները զբաղվելու յեն աշխատանքների գիտություններով: Նրանք պետք է զգան, թե ինչպես սեզոնի փոփոխությունը հետ փոխվում է նաև մարդու աշխատանքը և ինչպես ձմեռային ամիսներին համար միջերկրի և այլ նախապատրաստություններ է տեսնում: Յեթ վոր միայն հասակավորներն են հարմարվում բնությունը, այլև յերեսաները փոխում են իրենց խաղերի բնույթը:

Բացի յեղանակի գիտություններից պետք է զիտել նաև աշխատանքներ և հետևել դրա զարգացմանը: Վերջապես, աշխատանքների ծրագրերը մշակելիս կարևոր է սլարգել մեքենաների նշանակությունը դյուզատնությունների մեջ, ցույց տալով դրանց կոնկրետ առավելությունները:

Գ. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ, ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ՅԵՎ ԳՅՈՒՂՈՒՄ

Կշռել յերեսաներին ու չափել նրանց հասակը:

Համեմատել անցյալ տարվա թվերի հետ: Յերեսաների բժշկական քննությունը. քննության արդյունքը: Մշակել միջոցներ դպրոցի ներսում պահպանելու աշակերտների առողջությունը, ուղղորդության առնելով յուրաքանչյուրի առողջության անհատական պայմանները (որ. սրտի հիվանդություն ունեցողներին ազատել վորոշ աշխատանքներից, կարճատևներին նստեցնել առաջին կարգերում և այլն):

Հիվանդության պատճառով դպրոցից բացակայող բնկերների հաշիվը պահել:

Բնակարանի առողջապահական վիճակը յույսի, սղի, ջերմության, դիրքի տեսակետից: Ուղափոխությունը սենյակում:

Մարմնի, հագուստի մաքրությունը և տարադի առողջապահիկ նշանակությունը:

Աշխատանքը և հանգիստն ընտանիքում. քնի նշանակությունը:

Գյուղական բակերի, փողոցների առողջապահիկ վիճակը: Քանի՞ տուն ունի արտաքինը:

Գյուղի աղբյուրը. խմելու ջրի հասկությունը: Մաքուր և կեղտոտ ջուր: Մաքուր ջրի նշանակությունը, առողջության համար: Փորձել ջրի հետ, քամելը, գտելը (գ. խումբ) յետալը, գլորելիանալը: Յեռացրած ջրի առողջապահական նշանակությունը:

Կրակի վերակուր պատրաստելը. յեթա՞մ միջերկրի առողջապահական նշանակությունը:

Ինչ կարող են անել դյուզատնայինները, պիտենները, ԼԿՅԵ Միությունը բակերի, փողոցների հրապարակների և այլ վայրերի սանիտարական վիճակը յավանելու համար:

Աշակերտներն ինչ առողջապահական նորություններ են մտցրել ընտանիքում:

Հիվանդության դեպքում կապ պահպանել բժշկի կամ բուժակի հետ:

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ

Շարունակելով առողջության պահպանությունը աշխատանքն այն ձևով, ինչպես ա. խմբում, պետք է բ. խմբում ընդլայնել աշխ. դպրոցից դուրս—ընտանիքում և դյուզում: Դրա համար անհրաժեշտ է կապ հաստատել դյուզի հասարակական կազմակերպությունների, հատկապես բժշկի կամ բուժակի հետ և կապվել ուրիշ դպրոցների՝ փոխանակելու իրենց փորձը և ծրագիրը մշակելու դյուզում աշխատելու:

Կարևորն այն է, վոր յերեսաները յուրացնեն մի հիմնական միտք—ընտանիքի առողջապահությունը պայմանավորված է գյուղի առողջապահությամբ:

Դ. ԿՅԱՆՔԸ ՅԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՅՈՒՂՈՒՄ ՁՄՈՒՆԸ

Ձմեռային աշխատանքներ—վատնափայտի պատրաստությունը, բնակարանի, դոմի և այլ շենքերի հարմարեցումը ձմռան պահանջներին:

Յեղանակը ձմռանը—յեղյամ, ձյուն, սառույց, սառնամանիք: Նյութի 3 վիճակը: Չափել ձյան հաստությունը: Փորձով ցույց տալ, վոր սառույցը թեթե և ջրից: Ձուրը սառչելով ընդարձակվում է (փորձել—ջրով լի շիշը սառցնել): Մարմինների ընդլայնելը տաքությունից և սեղմվելը սառնույց: Քամի. քամու ուղղությունը. մեր դյուզում վոր կողմից են փչում ձմռան քամիները. ինչ բնական պատեններն ունի դյուզը ցրտից և քամիներից պաշտպանվելու:

Յեղանակը զիտելիս ծանոթացնել ջերմաչափին:

Պատմվածքներ ցուրտ ու տաք յերկրների մասին:

Դիտել ձյան տակի բույսերը: Բույսերի ցրտից պաշտպանվելու բնական հարմարությունները: Ձյան տակ ձմեռող սերմերից ծլեցնել և աճեցնել:

Կազմակերպում յերեսաների ձմեռային խաղերի:


Անասունների խնամքը—կերը, դրանց տեսակները, սրվա կերի չափը, կերակրելու կարգը: Հաշվել կենդանիների և նրանց կերի հաշվեկշիռը:

Մեր բնաանի կենդանիների արտաքին նկարագիրը, տալով մարմնի մասերի տարրական կենսաբանական նշանակությունը:

Ծանոթանալ կովի և վաշիսարի մարտությունների գործարաններին:

Մսակեր և խոտակեր կենդանիների բերանի կազմությունը—դունչը, ստամոքսը, լեզուն: Վոսկր և մկան: Դիտություն կենդանիների սովորությունները: Կենդանիների ցրտից պաշտպանվելու բնական պայմանները:

1008
36687
3071



Ինչպես են խնամում անասուններին և թռչուններին լավագույն տնտեսութուններում, յեթե կան, և ինչ հետևանք է ստացվում: Ծանոթանալ կենդանիների խնամքին և մասնակցել կաթի մշակման աշխատանքներին: Ինչ պետք է անենք, վորպեսզի բարելավվի անասունների խնամքը մեր գյուղում:

Ինչ աշխատանքներ է կատարում կինը գյուղական տնտեսությունում մեջ—կերակուր պատրաստելը, լվացքը, թել մանելը և զանազան գործվածքներ պատրաստելը, յերեխաների խնամքը, բնակարանի մաքրությունը: Ինչ են անում քաղաքում թեթևացնելու կնոջ աշխատանքը: (Հասարակական սեղանատներ, լվացքատներ):

Տնայնագործությունը և արհեստները մեր գյուղում:

Քաղաք գնալը: Ինչ նյութեր ու մթերքներ և տնայնագործական իրեր են տանում վաճառելու (բամբակ, բուրդ, կաշի, յուղ, պանիր, պտուղ, հաց, փայտ և այլն): Բանվորի արտադրական կապը գյուղացու հետ: Զրույց քաղկյանքի և գործարանի մասին (բերել որինակ մոտակա քաղաքի և գործարանի մասին): Ինչ ապրանք են քաղաքից գյուղ բերվում:

Ինչ ապրանքներ կան մեր կոոպերատիվում:

Մեր գյուղի ձմռան ճանապարհները և փոխադրական միջոցները:

Ֆերեկոյան ժամանցները գյուղում: Գյուղացիք սովորապես վորտեղ են հավաքվում լսելու ընթերցանություն և զրույցներ իրենց տնտեսությունը և կենցաղը բարելավելու մասին: Մեր գյուղի խրճիթ—ընթերցարանի կամ «Կարմիր անկյան» աշխատանքը ձմռան: Գյուղացիք ինչպես են ժամանակը անցկացնում հեղ. և այլ տոներին:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Աչնան թեման անցնելիս տեղ տրվեց և ձմեռային նախապատրաստություններին: Այժմ հարցն այն է, թե մարդիկ ինչ են անում ձմեռը:

Այստեղ, բնականաբար, պետք է խոսվի բնակարանները տաքացնելու մասին, այնուհետև մեծ տեղ ու ժամանակ հատկացնել կենդանիների խնամքին: Այս կետում հարկավոր է առանձնապես շեշտել կնոջ աշխատանքը, վորը նույնությամբ շարունակվում է և ամառը և ձմեռը: Ձմեռային աշխատանքներին զուգընթաց ուսումնասիրում ենք և այն պայմանները, վորոնց մեջ ընթանում է գյուղական ընտանիքների կյանքը (տան ներսում, ողաներում և այլն): Պետք է կանգ առնել ձմեռվա հաղորդակցություն և փոխադրություն ու փոխանակություն հարցի վրա: Այստեղ անհրաժեշտ է պարզել, թե ի՞նչ արհեստներ կամ արդյունաբերություն կա մեր գյուղում, ի՞նչ է արտադրում մեր գյուղը (և գյուղատնտեսական մթերքներ, և տնայնագործական արտադրանքներ): Ձմեռային վորսի, ձմեռող թռչունների ու վայրի կենդանիների մասին հետաքրքրական պատմվածքներն անշուշտ կկենդանացնեն այս թեմայի ուսուցումը:

Վերջապես պետք է կանգ առնել գյուղական յերեկո-ժամանցների ու կուլտուր լուսավորական աշխատանքների վրա, վորոնք ավելի տեղի յեն ունենում ձմեռվան ամիսներին ու նոր գծեր մտցնում գյուղի կենցաղի մեջ:

Լենինի որվանը պետք է մի լրիվ որ հատկացնել դպրոցում և այնուհետև շարունակել ընդհատված նյութի մշակումը:

ՅԵ. ԳԱՐՆԱՆ ՍԿԻԶԻԸ ՅԵՎ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Դիտողություններ բնության յերեկոյթների—դարնան որացույցը: Զյան հալոցը, ջրի գործը յիացումն ու ծծվելը հողի մեջ: Առունների ու գետերի հոր—գանալը: Ինչպես են մեղնում պալքարում վարարած գետերի գեմ: Պղտոր ջուր: Զրի քամելը: Արեւի, որերի տաքանալը, թռչունների վերադարձը, ծառերի բողբոջումը: Արեւի և ջերմության դերը բույսերի կյանքում: Փորձեր՝ բույսերը մութ տեղում աճեցնելու:

Ֆերեկվա և գիշերվա բարեխառնությունը:

Սոխարմատ, կոճղարմատ և արմատապտուղ բույսերի ծլեցնելը ու աճեցնելը: Ծաղկամաններում և արկղներում ծաղիկներ ցանել, բանջարանոցային բույսերի սերմեր ցանել—սածիլ պատրաստելու համար: Փորձով պարզել սերմերի ծլելու ունակությունը: Սերմացուի դրոմը: Սերմացրիչ կայաններ:

Ծանոթանալ ցանված բույսերի սերմերին և ծլած ու աճած մասերին: Նքսկուրսիա դաշտ ու անտառ՝ դիտելու բույսերի մեջ առաջացող փոփոխությունները:

Աշխատանքներ պարտիզում, այդում: Այգու և պարտեզների աշխատանքը մեր գյուղում—չորդիկների կտրելը. ծառերի վրա յերեկացող վնասատու միջատների վոչնչացումը: Պատվաստած ծառերի դիտողությունը, նոր ծառեր ու թփեր տնկելը և այլն:

Գյուղում բույսերի պահպանման և բաղմացման համար ինչ հասարակական աշխատանքներ են տարվում: Ծառատունկ: Տնկարանի դերը մեր գյուղում:

Դիտել թռչունների կենցաղը, նրանց ուտելու, խմելու, հանգստանալու, պաշտպանվելու և այլ սովորությունները: Հետևել թռչունների դարձին և գրել, թե նրանք ինչ հերթով են յերևան գալիս, մեր գյուղի շրջակայքում: Բուռն հյուսելը և ձուլ ածելը: Թուխս դնելը, ձվերի ընտրությունը, թռչուններին խնամել և կերակրել, նրանց համար զանազան հարմարություններ ստեղծելը և այլն:

Հողի պարարտացման աշխատանքներ: Կենդանիների աղբը, մոխիրը արտեր ու բանջարանոցներ կրելը: Գյուղի վոր տնտեսություններն են հաճախակի պարարտացնում իրանց հողերը: Առունների մաքրելը:

Նախապատրաստություն տեսնել դպրոցական հողամասի վրա աշխատելու, ծրագրել ընդհանուր աշխատանք, հողալ սերմացան գործիքներ, հաշվել հողամասը պարսպելու հետ կապված աշխատանքը և այլն:

Ծանոթանալ յերկրագործական գործիքներին և պարզ գործիքների մոդելները պատրաստել:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Գարնան սկիզբն այնպիսի ժամանակ է, յերբ յերեխաներին հափաղանց չատ դրազեցնում են բնության յերեկոյթները. այդտեղից էլ նպատակահարմար է թեման սկսել: Այստեղ անհրաժեշտ է կլիմայական փոփոխությունների և «կենդանի բնության» կապը առաջին հերթին ցույց տալ բույսերի վրա. այնուհետև նկատել, վոր մարդը նախապես իմանալով, թե հետագայում

բնությունն ինչ փոփոխություններ և կրելու, սկսում և պատրաստվել՝ ուղ-
տագործելու բնության ուժերը (նախադրուչական միջոցներ ցրտահարության
դեմ, սերմի հայթայթում և զտում, գործիքների նորոգում և այլն)։ Շատ
կարևոր և ընդգծել մարդկանց հավաքական գործունեությունն նշանակու-
թյունը բնության դեմ պայքարելու, հասարակական կյանքը կանոնավորելու
գործում, վորը վեր և մարդու անհատական ուժերից։

Անհրաժեշտ և, վոր դպրոցն և պատրաստվի դարնանային աշխատանք-
ներին և յուր կողմից ազդարնակությանը ցույց տա հնարավոր աջակցու-
թյուն։ Նպատակահարմար և ծանոթանալ հարեան դպրոցների գործունեյու-
թյանն այդ ուղղությամբ։

Այստեղ կա և մի ուրիշ ելական մոմենտ, վոր պետք և հաշվի առնել յերե-
կանների աշխատանքը կազմակերպելիս։ Դա կյանքի պրոցեսի (թե բնության
մեջ և թե մարդկանց աշխատանքներում) բազմազանությունն և։ Միաժամա-
նակ հանդես են գալիս մի շարք բնական յերևույթներ և ըստ այնմ և սկսվում
մարդկանց բազմազան աշխատանքները, վորոնք պետք և դիտել և նախապատ-
րաստվել դրանց համար։

Ուսուցչի գործը պետք և լինի հետևել, վոր յերեկանները կարևոր մո-
մենտները մոռացության չտան։ Նպատակահարմար և այդ յերևույթների ու-
սումնասիրությունը բաշխել ողակների միջև (որ. մի խմբակը հետևի թըր-
չունների կյանքի դիտողության, մյուսը՝ բույսերի ծլման պրոցեսին և
այլն)։ Ի հարկե, այդ խմբակների աշխատանքը վերջը պետք և զեկուցվի ամ-
բողջ խմբին։

2. ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՅՈՒՂՈՒՄ

Աշակերտների միջոցով մշակել դպրոցական հողամասի մի հատվածը։

Բնության յերևույթների դիտողությունները, ցերեկվա տեղիություն-
ներ. անձրևի, կարկուտ, կայծակ, վորոտ. դարնան քամիները։ Դիտողու-
թյունները նշանակել որպեսզի յեղանակի որացույցի մեջ։

Հողի մշակման ժամանակ ոգտագործվող գործիքները։ Սովորել սկսվել
գյուղատնտ. գործիքներից, (բահ, փոցի, թեթեվ ջրունդ, թորի)։ Մանու-
թանալ գյուղի գյուղատնտեսական ավելի բարդ մեքենաներին։

Յերեկանների ոգնությունը մեծերին հողի մշակման աշխատանքներում։
Վոր դաշտում ինչ են ցանում։ Սկզբնական հասկացողություն սերմավորութ-
յան մասին։

Հողն ինչ ձևվերով և ոգտագործում մեր գյուղերում։ Անհատական
մշակում, գյուղատնտեսական կոլլեկտիվներ (արտել, միություն)։ Մանութա-
նալ նրանց աշխատանքներին։

Բանջարանոցային աշխատանքներ—հողի մշակումը, մարդեր պատրաս-
տելը, ցանելը, տնկելը։ Սովորել ճանաչել մշակովի բույսերը, տարածված
մալխոտները և վերջիններին տված վնասը։ Մասնակցել քաղհանին։

Դիտել ծաղկող բույսերը, ամենից շատ վոր կանաչեղեններն են ցանում։
Սրանց խնամքը։ Կազմել բույսերի կոլլեկցիա։

Միջատներն այգում։

Բանջարանոցի, այգու և պարտիկի վնասատուներից կոլլեկցիա կազմել։

Աշխատանքներ այգում—աղբը, տերեվները, մոլխոտները մաքրելը։ Դի-
տել ծառերի և թիերի անման ընթացքը։ Նոր տնկիներ տնկելը։

Ծաղկանոց պատրաստել. ծաղիկների խնամքը։

Անասուններին արոտ հանելը. յերեկանների մասնակցությունը անասու-
ներին արոտ տանելիս։ Նախապանի աշխատանքը հոտի նկատմամբ։ Դիտել
հոտի կյանքը—արածելիս, հանգստանալիս, պաշտպանվելիս։ Կենդանիների
վնասատու միջատները և նրանից պաշտպանվելու ձևը։

Գյուղի հասարակական աշխատանքները դարնանը. ճանապարհների և
կամուրջների կարգավորումը, և այլն։ Դպրոցի մասնակցությունն այդ աշ-
խատանքներին։

Մասնակցել մայիսի 1-ի տոնակատարության։

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Արդեն նախկին թեմայից յերեկանների համար պարզվեց այն փաստը, թե
մարդը ինչպես տիրապետում և բնության ուժերին և հարմարվում դրան յուր
աշխատանքներով, միջոցներ խորհում ներկա և ապագա գործունեյու-
թյան համար։

Սույն թեման տալիս և մի շարք կոնկրետ տվյալներ, վորոնցից յերեկա-
նները հանում են այսպիսի յեղրակացություն—մարդկային աշխատանքն ան-
հոտորեն կախված չէ բնության տարերային ուժերից։ Նա ընտրում և ցանք
անելու ժամանակ, հոգ տանում բույսերին, նախատեսում և ցրտերի սկսվելու
ժամանակը և նախապատրաստական միջոցներ խորհում պաշտպանելու բույ-
սերը և այլն։

Այս թեման մշակելիս յերեկանները հանգում են մի ուրիշ կարևոր յեղ-
րակացության—մարդիկ ավելի լավ են բարվոքում իրենց կյանքը, յեթե նը-
րանք միացնում են իրենց ուժերը, աշխատում են հասարակայնորեն, կոլլեկ-
տիվ ձևով (հասարակական ցանքեր, աշխատանքներ, արտելներ, մեքենաներ
ձևով բերելը, կազմակերպելը և այլն)։

ՅԵՐԵԿԱՆԵՐԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՌԱՋԱՐԿԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԾՐԱԳԻՐԸ

1. Դիտել բնության ամառային յերևույթները։
2. Կազմել գյուղատնտ. աշխատանքների որացույց։
3. Կազմակերպել խմբական զրոտանքներ և ևքուկուրսիաներ։
4. Մշակել յերեկանների հետ ամառն առողջապահության ուժի մը։ (Լող,
հագուստ, սնունդ, հանգիստ և աշխատանք)։
5. Խնամել դպրոցական և սեփական հողամասերի վրա յեղած բույսերը։
6. Կազմակերպել ընթերցանության գործը։
7. Տարեվերջի ցուցահանդես (տե՛ս Ա. խմբի ծրագրում)։

յե) Զրադացի, չոգեհաղացի և ելեքորաղացի (յեթե կան չըջանում) արտագրանքի համեմատությունը:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ.

Աշունը բերքը ժողովելու և այս կամ այն ձևով ձմրան նախապատրաստությունների չըջանն է:

ա) Բերքի ժողովելը կատարելու յեն յերեխաներն անմիջապես իրենց ընտանիքներում, դպրոցի հոգամասի վրա կամ գյուղի չքավորություն, կարմիր բանակայինների ընտանիքներին, վորբերին ոգնություն կազմակերպելով: Այս բոլոր դեպքերում ուսուցիչը տալիս է հրահանգներ ուսումնասիրելու այդ աշխատանքների հետ կապված հիմնական յերեույթները, պոտղները, բույսերը, գործիքները, աշխատելու ձևը, կատարել բերքի հաշվառումը:

բ) Բերքը ժողովելու կենտրոնական մոմենտը պիտի դառնա բերքի տոնը, վորի նպատակն է չըջանի տնտեսությունը բարձրացնելու նոր խմբայիններ ստեղծել: Երա պատճառով դպրոցը հանդես է գալիս միջ միայն իբրե տոնը դիտող, այլև իր ու աշակերտների տնտեսությունների բերքի լավագույն նըմուշները ցուցաբերում և տոնին, մասնակցում և տոնի կազմակերպության, կազմում և դիպրամներ, տոնի վայրում, հրատարակում և թերթը, պատրաստում և լողունդներ, մասնակցում և տոնի վայրը դարգարելու, և կապոնատները դասավորելու և մյուս աշխատանքներին:

Սրան զուգընթաց, յերեխաները կատարում են տոնին ներկայացված տընտեսությունների ուսումնասիրությունը:

գ) Գյուղատնտեսական գործիքների և մեքենաների ուսումնասիրությունը կրելու յե գլխավորապես դիտողություն բնույթ:

Այստեղ անհրաժեշտ է գաղափար կազմել մեքենայի չարժիչ ուժի (մարդու կամ կենդանու մկանների, ջրի, գոլորշու կամ ելեքորական ուժի) մասին, մեքենայի աշխատող մասերը, նրանց կապը, չարժումների տեսակների (չըրջանաձև, ուղղաձև) հաշվումները մեքենաների արտադրողականության չուրջը: Վարձու կայանի (յեթե կա չըջանում) հասարակական դերը:

դ) Ամեն անգամ ցանկալի յե գրույցի, ընթերցանության և նկարների միջոցով տեղեկություններ տալ յերեխաներին գյուղատնտեսություն անցյալի, ինչպես և ավելի բացիոնալ ձևերի մասին:

2. ԳՅՈՒՂՆ ԻՐ ՇՐՋԱԿԱՑՔՈՎ (10-12 սր)

ա) Շրջակայքի մակերևույթը.—հարթությունները, բարձրություններ, լեռներ, ձորեր, ճահճներ, աղբյուրներ, գետեր և գետակներ (ակունք, հոսանք, վտակ, գետաբերան), լիճ, կղզի: տալ նախնական գաղափար երբսկուրսիաների միջոցով և նկարների վրա:

Զրի և քամու աշխատանքը բնութայն մեջ (եֆսկաբսիա):

բ) Գյուղի և չըջակայքի հատակագիծը. աշխարհի կողմեր. կողմնացույց, մասշտաբ, քարտեզի պայմանական նշաններ, (ծանոթանալ հատակագիծը կազմելիս): Մանրթանալ չըջանի քարտեզին, ապա դավառի և Հայաստանի քարտեզներին:

գ. Մեր գյուղում հողերի բաշխումը ըստ բնատեսքերի՝ հերկի-հող, խոտհարքեր, անտառ, այգի, պարտեզ, անպետք հողեր, ջրովի և անջրդի հողեր:

դ) Հողի պակասը և գյուղացիների կոխվը ցարի և կալվածատերերի դեմ՝ հողի համար: Հողի աղագնացումը՝ հողը Հողտեմբերյան Հեղափոխությունից հետո աշխատավորության հանձնելը:

յե) Ինչ են անում գյուղացիները և խորհրդային իշխանությունը մշակելի հողի քանակն ավելացնելու և վորակը լավացնելու համար (ջրաշինարարություն, ճահճները չորացնելը, հողերը չալիրներից աղատելը, հողի պարարտացում, քարերը ժողովելը և այլն):

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Մարդուն յենթակա բնության ուժերով պայմանավորվում և հասարակական և կյանքի կառուցվածքը: Այդ ուժերի ոգտագործումը կատարվում է աշխատանքի այն միջոցներով, վոր ունի մարդը:

ա) Այս թեմայի նպատակն է մի կողմից տալ գյուղի բնական ուժերի պատկերը ինչպես նա կա. բնական է՝ այս մասում անհրաժեշտ է յերեխային տալ բնագիտական-աշխարհագրական գաղափարներ՝ չըջագյուղություններ կատարելով, կովից, ավաղից, սովարաթղթից աշխարհագրական մոդելներ չիտելով և միաժամանակ նկարների ու պատրաստի մոդելների վրա լրացնել այն գաղափարները, վորոնք չըջակայքում ստանալ չի կարելի (որինակ՝ ծով, կղզի):

բ) Մյուս կողմից, անհրաժեշտ է ուսումնասիրել բնության դինամիկ պարզ յերեույթները, ջրի և քամու քայքայիչ դերը մեր յերկրում-բազմաթիվ որինալներով կարելի յե ցույց տալ ժայռերի հղկվելը քամուց, գետի հունի փոխվելը, ձորի գոյանալը, գետի քարերի հղկվելը ջրի հոսանքից:

Ողի և ջրի ոգտագործումը առաջին գրույցի և ընթերցանության առարկա կարող է դառնալ:

գ) Քարտեզագրության տարրերը տալ, սկսելով սեղանի, դասարանի, դպրոցի հատակագծից և ապա անցնելով գյուղի և չըջակայքի հատակագիծ-քարտեզին: Ծրագրում նշած կետերից աշխարհի կողմերը, կողմնացույց մասշտաբ և քարտեզագրական նշանները պիտի ծագեն իբրե անհրաժեշտություն, յերբ յերեխաները կսկսեն հատակագիծը նկարել:

Գյուղի կամ չըջանի հատակագծից և պարզ քարտեզից պետք է անցնել դավառի և Հայաստանի քարտեզը մոտից դիտելուն:

դ) Գյուղացու տնտեսություն մեջ բնական ուժերից առաջնակարգ տեղը պատկանում է հողին, նրա մեջ յեղած քիմիական յեվ ֆիզիկական ուժերին, ապա ուրեմն հողի քանակից կախված է գյուղացու արտադրության չափը: Այս գաղափարը պիտի լինի այն յեղրակացությունը, վոր արվում է գ. դ. և յե կետերում: Այս հիմնական խնդրից յեկնելով, պիտի ուսումնասիրել բնատեսքերի ուսումնասիրությունը թվերով, թվերն անհրաժեշտ է ստանալ գյուղխորհրդից և չըջործկողից. այդ թվերի ուսումնասիրության արդյունքը պիտի լինի այն, թե ինչու գյուղացիները պայքարել են հողի համար կալվածատերերի դեմ, ինչ է հողերի աղագնացումը, ինչու հողը չպետք է վաճառվի խորհրդային որենքով: Գյուղացիներից հարց ու վորձ կարելի յե անել և գրի առնել չըջանի կալվածատիրոջ կենցաղի, գյուղացիների չահագործման և գյուղացիների պայքարի մասին:

Ընթերցանության և գրույցի միջոցով պիտի ընդլայնել յերևոյաների պատկերացումը՝ կալվածատիրական սխտեմի և գյուղացիական շարժումներին մասին :

Յե կետում շոշափած խնդիրները յերևոյաներին պիտի վերադարձնեն նորից այն խնդրին , թե այսոր հողի համար պայքարելու ձևը ինչպէս և խորհրդային կարգերում , յերբ այլևս կալվածատիրական հող չկա : Ձրաշինարարության , ճահիճները չորացնելու և այլ միջոցները լայնացնում են աշխատավորներին տիրապետությունը բնութայն վրա :

Եքսկուրսիաների միջոցով այս գաղափարը պետք և պարզաբանել , թե՛ վերին , զրաֆիկներին , շարադրություններին նյութ դարձնելով այն :

3. ՏԵՂԱԿԱՆ ԱՐՀԵՍՏՆԵՐ (41 ՈՐ)

ա) Ինչ արհեստներ կան մեր շրջանում . տեղական ինչ նյութ են մշակում (բուրդ , բամբակ , փայտ , կաշի , կավ և այլն) : Ինչ իրեր են պատրաստում տեղական արհեստավորներն ու տնայնագործները վորակի և ում են վաճառում այդ իրերը :

բ) Արհեստավորներին և տնայնագործներին աշխատանքի վատառողջ պայմանները (կեղտոտությունը , խոնավությունը , լույսի պակասությունը և այլն) : Ինչպէս կարելի յե բարձրել նրանց աշխատանքի պայմանները և տնայնագործի յերևոյաների աշխատանքը :

գ) Արհեստագիտական իշխանությունը ինչ միջոցներ և ձևերով արհեստավորներին և տնայնագործներին աշխատանքի պայմանները բարձրելու , արդյունավետ դարձնելու ու համայնացնելու համար (վարկավորում , արտել , վաճառքի կազմակերպում և այլն) :

Մեր գյուղից կողմնակի աշխատանքի ուր են գնում : Մեր գյուղից ովքեր են աշխատում գործարանում :

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ

Եքսկուրսիայի միջոցով պարզել արհեստավորի և տնայնագործի արտադրանքի բնույթը , տեղական թե զբոյց բերած նյութի մշակում , արտադրանքը տեղի կարիքների , թե արտահանության համար և : Արհեստավորներին արտադրանքի անհրաժեշտությունը գյուղացու տնտեսության մեջ ուսումնասիրել , հատկապէս ծանոթանալով վորեւ տնտեսության մեջ գործածվող իրերին :

Արհեստանոցում ծանոթանալ գործիքների և նրանց գործածության ձևերին և նշանակության . արհեստներից ուղադրություն դարձնել փայտի , յերկաթի (պայտագործի , դարբնի) , թիթեղի , պղնձի , կավի , բրդի (վախախտ , գործ) մշակման վրա : Տնայնագործներից մեր շրջաններում տարածված և ջուլահային , գորգագործային , մասամբ փայտի տնայնագործությունը . տնայնագործի աշխատանքը ընտանիքում . ընտանիքի անդամների մասնակցությունը : Վաճառման ուսումնասիրության ժամանակ ուշք դարձնել միջոցառողի և կուսակցի աշխատանքների վրա : * Առանձին ուղադրություն պիտի տալ տնայնագործական միության կամ արտելին , նրա կատարած գերը , գործիքներ , մատակարարելու և արտադրանքի վաճառքը կազմակերպելու տեսակետով :

Աշխատանքի պայմաններն ուսումնասիրելիս ուշք դարձնել գործիքներին պարզության վրա և համեմատել այն մեքենայական արտադրության հետ :

Գյուղի արտադրության ներկա պայմաններում գյուղացին ազատ ժամանակ ունի , վոր գործադրում և տնայնագործության վրա , կամ գնում և գյուղից կողմնակի աշխատանքի , հաճախ խոխոգրվում և քաղաք : Գյուղի գերնակցության այս յերկուսից պարզել գյուղից հեռացող սեղոնային բանվորների կամ բոլորովին քաղաք տեղափոխված բանվորների անվանացուցակը կազմելով :

4. ԳՅՈՒՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԿԵՆՅԱՂԸ

ա) Գյուղխորհուրդը գյուղի իշխանությունն և : Նրա կազմակերպությունը և աշխատանքները : Ով և ընտրում գյուղխորհուրդը : Բաւորակ , չքավոր , միջակ և կուլակ) : Կանանց ընտրական իրավունք : Ընտրովի որդաններին հաշվետվությունը ընտրողների առջև :

Շրջագործկոմ , նրա գործը , ով և ընտրում շրջագործկոմը : Գալգործկոմ , մեր գավառի աղմինիստրատիվ բաժանումը : Հայաստանի բաժանումն ըստ գավառների . ցույց տալ քարտեզի վրա :

բ) Գյուղի վերաշինությունն աշանը : Աղբյուրը , ջրհորները մաքրելը , կամուրջների շինելը . արտաքնոցներ կա՞ն գյուղում , ինչպէս և մասնակցում գլորոցը գյուղի վերաշինության գործին :

գ) Բնակչության առողջապահությունը : Հնի միացորդները (հեքիմ , տատմեր , աղթքով , թլիսմով և այլ միջոցներով բուժելու սովորություններ) :

Յերևոյաներին խնամելու հին ձևվեր (յերևոյանի որորոցում ձեռքերն ու վոտքերը կապելը , խաչ-խաչ տալը , ծեծելը և այլն) : Բժիշկը և մանկաբարձությունը գյուղում , մանկական կոնսուլտացիա և յերևոյանի խնամելու նոր ձևվերը :

Գլորոցն ինչ և անում գյուղի առողջապահությունը բարձրացնելու համար :

դ) Լուսավորությունը գյուղում . գլորոցը գյուղում . վորքան յերևոյան յսովորում . մանկական հրապարակ , հասակավորների գլորոց (լիկկայան և այլն) . գյուղյեթիտ գլորոց . խրճիթ-ընթերցարան . նրա աշխատանքը : Թերթիկ և գրքի նշանակությունը : Ինքնակրթական խմբակները , կարմիր անկյուններ , պատի լրագիր , « Կորչի անդրադիտությունը » ընկերություն :

Ներկայացումներ , դասախոսություններ , հանգեսներ գյուղում : Գյուղի խորհրդային և հասարակական հիմնարկների և կազմակերպությունների ոգնությունը լուսավորության հիմնարկներին (գլորոցին , խրճիթ-ընթերցարանին և այլն) :

Ինչ և անում գլորոցը գյուղի բնակչության լուսավորությունը բարձրացնելու համար :

յե) Գյուղի հասարակական կազմակերպությունները . ՄՈՊՐ , Պաշտ-Ա-վիտքիմ , Փոխդիւմ , պրոֆմիություն , բաւորակիւմ , նրա գերը գյուղում , կամըջիլ կամ յերիտըջիլ , պիոներ , կին պատգամավորական խմբակներ :

զ) Աչկոսպի աշխատանքները և աշակերտների ցույց տված սղնությունը :

այլ ընդհանրապես, դյուղի արտադրումը զգալի փաստերի յերևան հանվելով և պարզաբանվելով:

1. Փոխանակութիւն. ա) Գյուղացիները վորտեղ են վաճառում մեր գյուղերում արտադրած ապրանքները: Գյուղի համար ինչ ապրանքներ և վորտեղից են գնում: Կոոպերացիայի դերը ապրանքափոխանակութեան մեջ: Գյուղի և քաղաքի առևտրական մշտա հիմնարկները՝ շուկա, տոնավաճառ, մասնավոր և պետական խանութներ:

բ) Ինչ ճանապարհով են տեղափոխվում ապրանքները գյուղից քաղաք և քաղաքից դյուղ՝ խնուղի, սայլի ճանապարհները, յերկաթուղին մեր շրջանում և դավառում. ջրային ճանապարհներ, ողային ճանապարհներ, չողե- շարժ, չողենավ (փորձով ծանոթանալ չողու ուժի հետ), ողանավ:

Քարտեզի վրա ծանոթանալ Հայաստանի գլխավոր քաղաքներին և ճանապարհներին:

2. Գործարաններ. ա) Վորտեղ են պատրաստում գյուղի անհրաժեշտ ապրանքները. մեր քաղաքի և շրջանների գործարանները (յեթե կան): Մեքենայի և ձեռքի աշխատանք: Ծանոթանալ փոքր, համեմատաբար պարզ մեքենայի ընդհանուր կազմութեան: Գործարանի և արհեստանոցի համեմատութիւնը: Մեքենայի գործադրութիւնը, աշխատանքի պահպանութիւնը, ութ ժամվա աշխատանքի որ գործարանում:

բ) Աշխատանքը գործարանում նախկին ժամանակները. ցածր աշխատանք, աշխատանքի առողջ պայմաններ, աշխատանքի յերկար որ, կանանց և յերեխաների աշխատանքը, բանվորների իրավազուրկ դրութիւնը, կադմակերպելու արդելները:

գ) Բանվորների պայքար ցարի և կապիտալիստների դեմ: Լենինի և լաւյէնիկների դերը այդ պայքարում: Բանվորների հաղթանակը Հոկտեմբերին և բանվորա-գյուղացիական իշխանութեան կազմակերպումը: Հայաստանի բանվորների և գյուղացիների ապստամբութիւնը 1920 թ. և Հայաստանի խորհրդայնացումը:

3. Քաղաքի կյանքը. ա) Քաղաքի համեմատութիւնը գյուղի հետ. բընակչութեան կենտրոնացումը քաղաքներում. քաղաքի տունը, փողոցները, շարժումը քաղաքներում (կառքեր, ավտոմոբիլներ, ելեքտրաքարշ):

բ) Քաղաքի բնակչութիւնը ըստ դասակարգերի: Քաղխորհուրդը և նրա աշխատանքը. դավգործկոմ, նրա բաժինները:

գ) Հայաձտանի և Անդրկովկասի գլխավոր քաղաքները—Յերևան, Լենինոնական, Թիֆլիս, Բաքու և Բաթում (ցույց տալ քարտեզի վրա): Խորհրդային Միութեան գլխավոր քաղաքները—Մոսկովա, Լենինգրադ, Նարկով (ցույց տալ քարտեզի վրա):

4. Քաղաքի և գյուղի կուլտուրական կապը.—Փոստ, հեռագիր, հեռախոս, ուղի: Քաղաքից բերվող՝ գիրքը, թերթը և այլն: Ինչ թերթեր են ստանում մեր գյուղերում: Վոր քաղաքներում են տպւած մեր գրքերը: Ինչպէս թղթակցել թերթերին. գյուղթղթակից և բանթղթակից (կարգալ թերթի թղթակցութիւնները): Քաղաքի ինչ հիմնարկի հետ և. ինչպէս և կապված մեր դպրոցը:

1. Գյուղի և քաղաքի տնտեսական կապը արտահայտվում է այն ապրանքափոխանակութեամբ, վոր կա այդ յերկուսի մեջ: Ծանոթանալով գյուղացու տնտեսութեան մեջ գործադրվող գործարանային իրերին (նավթ, լուցկի, շաքար, գործվածքներ, մետաղյա գործիքներ, ապակի և այլն) պարզել, վոր առանց այդ ապրանքների գյուղական տնտեսութիւնը կանգ կառնի կամ հետ կդարգանա դեպի նախնական ձեւերը, գյուղացու աշխատանքի արտադրողականութիւնը կիջնի:

Եթևուրսիայով ծանոթանալ վաճառատներում (կոոպերատիվ և) այլն) քաղաքից բերվող ապրանքներին: Ապրանքների ֆիրմաներին ծանոթանալով (կարգալ ապրանքի վրայից), պարզել՝ ինչ քաղաքներից են բերված: Պարզել՝ վորեւ միջակ գյուղացու տնտեսութեան մեջ վորքան և նրա արտադրած ապրանքը—այն և, վորքան և գյուղացին իր բերքից վաճառում, իրեն համար անհրաժեշտ այլ ապրանքներ գնելու համար:

Պարզել՝ ինչպիսի ապրանքներ և գյուղացին վաճառում (ցորեն, մսացու, կաթնամթերքներ, ընդդէն, պտուղ, ծխախոտ, տեխնիքական բույսեր և այլն):

Դիագրամների և խնդիրների միջոցով կազմել ապրանքափոխանակութեան մոտավոր հաշիւ: Կոոպերատիվի ապրանքափոխանակութեան ունակութիւնը պարզել՝ կոոպերատիվում ինչ ապրանքներ և ինչ գումարի կոոպերատիվ մեկ տարում գնել և գյուղացիներից և վաճառել և գյուղացիներին: Այս հարցերի հետ զուգընթաց հաճախել տոնավաճառը (յեթե շրջանում կադմակերպվում է այդպիսին):

Համեմատել կոոպերատիվի գները մասնավոր առևտրականի գների հետ: Ինչու գների իջեցումն ոգնում է գյուղացուն: Միաժամանակ պարզել գյուղից արտահանվող մթերքների հետագա վիճակը և պարզել, վոր քաղաքը գյուղի մթերքներով և ապրում և արտադրում (սննդամթերքներ, տեխնիքական մշակութիւններ՝ բամբակ, բուրդ, սպիրտ և այլն). բնականաբար դրվելու յե փոխադրական միջոցների խնդիրը, ճանապարհները և կառքերը, գործնականորեն ծանոթանալ շրջանի հարմար և անհարմար ճանապարհներին: Քարտեզի վրա միացնել մեր գյուղը և շրջանի կենտրոնն ամենամոտ քաղաքի հետ և ապա ծանոթանալ Հայաստանի ճանապարհներին: Յեթե կա մոտիկ յերկաթուղի, եթևուրսիայով ծանոթանալ կայարանի հարմարութիւններին և գնացքների հաղորդակցութեան: Կարգալ և նկարի վրա ծանոթանալ յերկաթուղու, ջրային, ողային ճանապարհորդութիւնների հետ: Կարգալ յերկաթուղու, չողենավի, ողանավի պատմութիւնից կտորներ:

2. Լավագույնը եթևուրսիայով մոտիկ գործարան հաճախել և, վորտեղ կարելի յե տեսնել մեքենայական արտադրութիւնը, համեմատել այն գյուղի արհեստավորի պրիմիտիվ արտադրութեան հետ: Խնդիրներով պարզել վորեւ մեքենայի արտադրական չաիր:

Ապա բանվորի ղեկավար դերը մեքենայի մոտ, գործարանի կազմակերպութիւնը և աշխատանքի բաժանումը (գործարանի բաժինները) և վարչութիւնը: Բանվորական ուժի պահպանման որենքները և նրանց կիրառումը: Գործարկումի դերը գործարանում, աշխատանքի տեսուչը:

Բանվորների կենցաղը, բնակարանները, աղումը, դրադարանը:

Այս բոլոր խնդիրներին ծանոթանալուց հետո կարելի չէ նրանց լուսաբանությունը լրացնել ընթերցանությամբ և դրույցով:

Արդիականության այս հարցերից հետո անհրաժեշտ է անցնել բանվոր դասակարգի պայքարի պատմության, վորի պարզաբանությունը դերադասելի չէ նկարների ցուցադրությամբ և գեղարվեստական ընթերցանությամբ:

Ծրագրում նշված հարցերը բերում են Հոկտեմբերյան հեղափոխության պատմության, վորը համառոտ կերպով տրվում է յերեսաներին պարզվում է բայլչեիկյան կուսակցության և ընկ. Լենինի գեղարվեստական դերը բանվոր դասակարգի կատարած հեղափոխության մեջ: Հայաստանի Նոյեմբերյան խորհրդայնացումը պարզաբանվում է իբրև չարունակնություն Հոկտեմբերյան հեղափոխության և ամբողջ խորհրդային Միության բանվորների և դյուղացիների շարժումը: Այս հարցերը տրվում են պարզ հոգվածների ընթերցանության ու դրույցի ձևով և չընթանում պատահած դեպքերի մասին հասկանալու ներքից հարցնելով:

3. Քաղաքի կյանքը նպատակահարմար է ուսումնասիրել քաղաքում (յեթե դյուղի յերեսաները դան քաղաք):

Գեղարվեստական ընթերցանության միջոցով պարզել դյուղի աշխատավորության շարժումը դեպի քաղաք. քաղաքի ուսումնասիրության ժամանակ պարզել փողոցների արտադրական դերը, տարածության տնտեսման սկզբունքը, տների նպատակահարմար կառուցվածքը, առողջապահական կադմակերպությունը քաղաքում (դռնապան, աղբահանություն, հասարակական արտաքնոցներ, քաղաքային այգիներ, մայթեր, կոյուղի, ջրամատակարարում, բաղնիքներ, հասարակական ճաշարաններ, բուժարաններ, թաղային բժիշկներ):

Բանվորական թաղեր, կյանքն այդ թաղերում. դյուղ-աղումը և այլն: Ընթերցանությամբ կարելի չէ ծանոթացնել ամբողջ մեծ քաղաքների հետ: Քաղաքը կառավարելու խնդիրը բնականաբար ծագելու չէ, յերբ յերեսաները մոտիկից ծանոթանան քաղաքի կյանքի բարդության: Ուստի և պետք է հաճախել քաղխորհուրդ՝ ծանոթանալ նրա սեկցիաներին, նրանց աշխատանքների ծրագրերին և քաղխորհրդի գործադիր մարմիններին: Անդրկովկասի քաղաքներին քարտեզի վրա ծանոթանալով՝ յերեսաները թվական տվյալներով պիտի յեղրակացեն Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի դյուղացիության գերակշռությունը և մեր յերկրի հետամնացության պատճառը:

4. Վորչափ յերեսաները ծանոթանալով քաղաքի կյանքին կհամոզվեն քաղաքի տնտեսական և քաղաքական դերին, այնքան ել նրանց համար հասկանալի կդառնա քաղաքի կուլտուրական դերը: Կապի միջոցները պետք է ուսումնասիրել գործնականորեն—այսպես՝ մոտակա փոստում նամակներ, հեռագրեր ստանալ կամ ուղարկել, միաժամանակ եքսկուրսիայով ծանոթանալ փոստի գործառնության ձևերին. չընթանի հեռախոսով խոսել վորեւ գործի մասին, յսել մոտակա դյուղում յեղած ռադիոհաղորդը:

Տպագիր կապի միջոցները—գիրքը, թերթը, առիթ պիտի ծառայեն դրույցերու, գրքի և թերթի խմբագրելու, տպագրելու և տարածելու մասին: Այս թեման անցնելիս գործնական կլինի ստացվող վորեւ թերթի բաժիններն

ուսումնասիրել և համեմատել դյուղում կամ հենց դյուղում լույս տեսնող պատի լրագրի հետ:

Գյուղի դյուղոցն իր կապը քաղաքի հետ ամրացնելու նպատակով լավ կլինի, յեթե կուլլեկտիվ նամակագրությամբ կապվի վորեւ կուլտուրական հիմնարկի հետ գործնական կապերով—գյուղի և դյուղոցի խնդիրներն առաջադրելով ստանալ խորհուրդներ:

Գ. ԳՅՈՒՂԸ ԳԱՐՆԱՆԸ

«Գյուղը դարնանը» կոմպլեքսը նպատակ ունի յերեխաներին մի կողմից մասնակից դարձնելու գործնականապես դարնանային գյուղատնտեսական աշխատանքներին, մյուս կողմից գիտելիքների վորոշ պաշար տալով, նրանց առաջ դնելու գյուղի տնտեսութունը բարձրացնելու հերթական խնդիրները:

Այս կոմպլեքսի 8 թեմաներից չորսը (հողի մշակումը, ջուր դարնանը, կենդանիներն արոտատեղերում և ծառատունկի տոն), մտնում են բոլոր դըպրոցների աշխատանքների մեջ: Մնացած չորսը (այգին և պարտեզը դարնանը, մեր գյուղի արոտատեղերը, մեղվանոց և անտառը դարնանը) ունին զուտ տեղական բնույթ և մտնելու յեն այն դըպրոցների աշխատանքի ծրագրերի մեջ, վորտեղ չըջակայքն ունի այդ որյեկտները:

Գարնան սկզբից անհրաժեշտ և կազմակերպել դարնանային բնության ոխտեմատիկ գիտողությունները—մթնոլորտաբանական և ֆենոլոգիական (բույսերի և կենդանիների սեզոնային փոփոխությունները): Սրա համար անհրաժեշտ և յերեխաներին բաժանել արտադրական ողակների:

1. Հողի մշակումը

ա) Հողի մշակումը, հողի ջրունակությունը և խտությունը (փորձ կալի, կավահողի, ավազահողի վրա. կոշտ և փուխը հողեր): Հողի մշակման հին և նոր գործիքները, բահի, արորի, գութանի, տրակտորի, փոցխի աշխատանքը: Դըպրոցական հողամասի մշակումը:

բ) Հողի պարարտացումն, սեվահող, հողի բուսահողը (փորձ), հողի հոգնածությունը և արհեստական պարարտացումը (կենդանիների աղը, մոխիր, ջուսպ, ժղեր): Փորձեր դըպրոցի հողամասի վրա:

գ) Ցանքափոխություն. բազմադաշտյան ցանքսը մեր չըջանում. նրա ողուտը:

դ) Ցանքսը, սերմանում: Նոր բույսերի մշակումը մեղ մոտ, չաղացանի և չարքացանի տարբերությունը:

յե) Դըպրոցական հողամասի մշակման ժամանակ ծանոթանալ վարձակալանից վերցրած մեքենաներին: Գյուղատնտեսի, վարձակալանի, փոխողկոմի, կոոպերացիայի, խորհրդային այլ հիմնարկների ողնությունը գյուղացիներին դարնանային աշխատանքների ժամանակ:

զ) Ցանքսերի տարածությունը Հայաստանում:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Հողի մշակումը պետք և սկսել վաղ դարնանը, դըպրոցական հողամասում, նախորդ ծրագրերով յերեխաների հետ թե մշակութների տեսակները, թե մշակելի տարածությունը (յերեխաների ուժի համեմատ), թե աշխատանքի

վարմանի լպության ձեւը: Նախորդ անհրաժեշտ եւընտրել հողամասը, չափել այն, բաժանել յերեխաների ողակներին, ձեռք բերել գործիքները, սերմերը, մաքրել առուները: Հողի հերկը կամ փորելը կատարելիս պետք և պարզել ծրագրված խնդիրները, հողի և գործիքների ուսումնասիրությունը: Հողի պարարտացման խնդիրները պետք և դնել փորձնականորեն, մշակվող հողամասի մարգերի մեջ միևնույն բույսերը դանաղան պարարտանյութերով փորձերի յենթարկել:

Բոլոր ողակները մանրամասն հրահանգ պետք և ստանան աշխատանքի սկզբին և նրա ընթացքում աշխատանքները հաջող տանելու և որագիր կազմելու մասին:

Ցանքափոխությունը պարզելու համար մի քանի հողամասերի վերջին տարիների ցանքսերի պատկերը պարզել գյուղացիներին հարցնելով և ապա փորձադաշտի վրա կատարվող ցանքափոխության հետ ծանոթանալով պարզել վերջինի նպատակահարմարությունը: Ցանքսի ժամանակ յերեխաների հետ ցանել դոված և խառը սերմը և հետեւել արղյունքներին: Թվաբանական խնդիրներով պարզել չարքացանի գերադանցությունը չաղացանի հանդեպ:

Գարնանը գործադրվող գյուղատնտեսական մեքենաներին ծանոթանալ նրանց գործի ժամանակ դըպրոցական հողամասում և պատեհ միջոցներ դրտնելով, յերեխաներին եքսկուրսիայի տանելով աշխատավայրերը: Դըպրոցական հողամասը մշակելիս միշտ գերադասել լավագույն մեքենաները կայանից վերցնելով:

2. Այգին և պարտեզը գարնանը

(Այգեգործական չըջանների համար)

Այգու և պարտեզի աշխատանքները դարնանը, հողը փորելը և դրա նշանակությունը: Մշակման ժամանակ գործադրվող գործիքներն այգում և պարտեզում: Ճյուղերի հատելը: Ծառերի բողբոջելը, ծաղկելը և այլն. այգու և պարտեզի վնասատուներ և պալքարը նրանց դեմ: Մեր գյուղի, չըջանի, դավառի և ամբողջ Հայաստանի այգիների և պարտեզների տարածությունը:

Շըջանում ինչ այգեգործական միություններ կան. ծանոթանալ նրանց գործունեյության:

Խորհրդային իշխանությունն ինչ և անում մեր չըջանում այգեգործությունը դարգացնելու համար:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Այգու մշակության թեթև աշխատանքներին յերեխաները մասնակցելիս միայն կարող են հասկանալ այն բոլոր խնդիրները, վոր դրված են ծրագրում, ուստի նպատակահարմար և դըպրոցի հողամասի վրա այգի կամ պարտեզ ունենալ:

Գարնան ամենահետաքրքիր չըջաններից մեկը ծառերի բողբոջելն և ու ծաղկելն և վորի ժամանակ յերեխաները բազմաթիվ գիտողություններ կարող են կատարել: Բողբոջների, ծաղիկների փոշոտման միջոցների հետ յերեխաները մեծ հետաքրքրությամբ կծանոթանան, ուստի չպետք և բաց թողնել այս չըջանը և չըջագայություններին պատշաճ տեղ պետք և տալ:

Վնասատուներին ծանոթանալու դործն անպայման պետք է կապված լինի վնասատուների դեմ կազմակերպված պայքարի հետ. դպրոցը պետք է անցկացնի այդ պայքարի լայն կամպանիա:

Այգեգործական միության կանոնադրության հիմնական ձևերը կարելի է բացատրել խմբում, ապա դործնականորեն ծանոթանալ ընկերության աշխատանքներին:

3. Զուրը գարնանը

ա) Հետևել առուների և գետերի հորդանալուն, ծանոթանալ հորդացած գետի ջրի քայքայիչ աշխատանքին (եքսկուրսիա և դիտողություն): Քարտեզի վրա ծանոթանալ Հայաստանի գլխավոր գետերին:

բ) Ձկների տեսակները մեր ջրերում, դիտել ձկան կյանքը, ձկան հարմարացումները ջրային կյանքին: Ձկնորսությունը մեր շրջանում: Հայաստանի գլխավոր ձկնորսական շրջանը—Սևվանա լիճը:

գ) Ջրային մյուս կենդանիները մեր շրջանում: Դիտել դորտի դարդացումը: Կյանքը կանգնած ջրերում: Մոծակի հարսնյակը դտնել և հետևել նրա դարդացման:

դ) Թափվող ջրի ուժը: Դրա նշանակությունը մեր գյուղի և շրջանի տրնտեսության համար (եքսկուրսիա դեպի ջրաղաց և ելեքտրակայան), Խոհրդային իշխանության ջրանլեքտրակայաններ կառուցելու դործում: Արհեստական վոդոգումը Հայաստանում և նրա նշանակությունը:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Այս թեմայի նյութը յերեխաների խոշոր հետաքրքրության առարկան է: Ջրի գերը բնության վաղ դարնան եքսկուրսիաների ժամանակ պարզել հետևելով հորդացած գետի և նույնիսկ առվակի աշխատանքին. ալվալի, տիղմի, քարերի շարժումը, հղկված քարերի հավաքածու կաղմել, չափել գետի ջրի արագությունը, դիտելով ջրի վրա լողացող փայտի արագությունը:

Քարտեզի վրա նախ ծանոթանալ յերեխաների տեսած գետին կամ գետակին և ապա անցնել մյուս գետերը:

Ձկան կյանքը դիտելու համար լավագույնը դպրոցում ալաղան կամ գեթ տկվարիում ունենալն է, վոր կարելի յե յերեխաների հետ շինել ապակուց: Ընթերցանության և նկարների միջոցով կարելի յե խորացնել յերեխաների պատկերացումը ձկան մասին: Ձկնորսական գործիքներին ծանոթանալու համար այցելել ձկնորսին և ապա ընթերցանությունը պարզել ձկնորսների կենցաղը ծովափնյա վայրերում:

Գորտի և մոծակի դարդացման համար կարելի յե ունենալ հատուկ ալվարիումներ:

Ջրի ուժն ուսումնասիրելիս շինել արհեստական ջրաղաց և պարզել տուրբինի մեքենայական հատկությունները:

Ջրաղացում և ջրանլեքտրակայանում ծանոթանալով նրանց կառուցվածքին բնականոր գծերով, պարզաբանել յերեխաներին թափվող ջրի եներգիայի էականությունը մյուս շարժիչ ուժերի հետ (գոլորշի, բենզին): Այս հիման վրա պարզել խորհրդային իշխանության քաղաքականությունը—ելեքտրոֆիկացիայի նկատմամբ:

Շրջանի ջրաշինարարական աշխատանքները հիմք վերցնելով, անցնել Հայաստանի ջրաշինարարական աշխատանքներին:

4. Մեր գյուղի արտատեղիները (անասնապահական շրջանների համար)

Ծանոթանալ այն բույսերին, վոր անասուններին կեր են ծառայում: Ծաղիկների կաղմությունը: միջատների դերը փոշոտման դործում (կարելի յե դիտել և պարտեզի թառերի վրա): Արմատապտուղ բույսերը մարդագետանում. արմատապտղի սննդի պաշարը. արտատեղերի վայրի կենդանիները: Հայաստանի արտատեղերը:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Այս թեմայի նպատակն է յերեխաներին ծանոթացնել խոտաբույսի տարեկան կյանքի հետ: Արմատապտուղները դարնան հանելով հողից, կարելի յե համոզվել, վոր նրանց մեջ կան սննդատու նյութեր և ծառայում են բույսի ինքնապաշտպանության համար (ձմեռելու միջոց). ծաղկի և սերմի միջոցով բույսը կարողանում է շարունակել իր տեսակի կյանքը և տարածումը:

Կենդանիները դիտելիս պետք է պարզել նրանց ապրուստի պայմանները և կապը միմյանց և բուսական աշխարհի հետ:

Արտատեղիներին ծանոթանալով անհրաժեշտ է պարզել ալայան գոտու նշանակությունը Հայաստանի համար և կապել այն անասնապահության նըշանակությունը լեռնային Հայաստանի համար:

5. Ընտանի կենդանիներ արտատեղում

ա) Դիտել խոտի կյանքը, դանաղան կենդանիների ուտելու, խմելու, հանդստանալու, պաշտպանվելու ձևերը:

բ) Մասնակցել կենդանիների խնամքին. կաթի մշակումը: Գյուղացիները դարնան վորտեղ են վաճառում իրենց կաթնամթերքները: Ծանոթանալ տնայնապահական և կաթնատնտեսական տրտելին: Արտելում թվերով պարզել նրա շահավետությունը:

գ) Տեղական և արևելյան ցեղի անասունները: Անասնապահությունը Հայաստանում:

դ) Թռչնաբուծությունը Հայաստանում:

յե) Թռչունների և այլ կենդանիների խնամքը դպրոցում:

ԹԵՄԱՅԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆԸ

Անասնապահական շրջանների համար այս թեման պիտի բունի կենտրոնական տեղը դարնան աշխատանքների ժամանակ: Ուստի և թեման շատ ալելի մանրամասն պետք է մշակվի դպրոցի կողմից:

Կենդանիների դիտողությունը լավ կկատարվի, յեթե դպրոցն ունենա կենդանիներ, վորոնց խնամքով յերեխաները սիստեմատիկ կերպով կզբաղվեն: Խնամքի ժամանակ է, վոր յերեխաներն ուսուցչի առաջադրությամբ կկատարեն իրենց դիտողությունները:

Դպրոցում անհրաժեշտ է ունենալ շրջանում խնամվող կենդանիների տեսակներից: Յերեխաների համար ալելի դյուրին կլինի իհարկե ճենդանիներ, բից մանր տեսակների խնամքը (այծ, թռչուններ, խոզ, ճագար), սակայն

բացի այդ, կովի, ձիու խնամքը թողնելով մեծերին, նրանց զիտողությունը նույնպես անհրաժեշտ է կազմակերպել: Անասնապահության տնտեսական նշանակությունը պարզելիս, անհրաժեշտ է ծանոթանալ կաթնամթերքների մշակման տեղական ձևերին և նրանց ուսուցանելիքային խնդրին, մեքենայացում, գործարան, սրանից անցնել արտերկրի կազմակերպման անհրաժեշտության (տնտեսական և հասարակական անհրաժեշտությունը):

Այս հարցերակցության միջոցների դյուրության անհրաժեշտությունը կապել ագրոհանման հետ:

6. Մեղվաճուղ (մեղվաբուծական շրջանի համար)

Մեղվաճուղ, ծանոթանալ մեղրի արտաքին կազմությանը և կյանքին. փեթակի կազմությունը. հին և նոր տեսակի փեթակների համեմատությունը. վերջինի առավելությունը: Ինչ ծաղիկներից և վերցնում մեղուին իր բերքը: Գյուղացիները մեր շրջանում ցանում են մեղրատու բույսեր: Մեղվապահի աշխատանքները: Մեղվաբուծական ընկերություն: Փեթակների թիվը մեր շրջանում: Մեղվաբուծական շրջանները Հայաստանում:

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ

Մեղվաճուղն առանձին շրջանների համար նշանակություն ունի, ուստի և նա գրավելու չէ այդ շրջանների աշխատանքներում մեկ շարաթյա փամփայլ:

Ցանկալի չէ, վոր դպրոցն ունենա փեթակներ, ուր սակայն յերեխաները մեծ աշխատանք կատարել չեն կարող: Թեման մեծ մասամբ անց են կացնելու զիտողության, ընթերցանության և հատվածների ձևով:

7. Անտառը գարնանը (անտառային շրջանի համար)

Գարնան առաջին ծաղիկները:

ա) Ծաղկի կազմությունը. անտառային ծառերի ծաղիկը. փոշոտման զիտողություն: Ծառերի տեսակներն անտառում: Բույսերի պայքարն անտառում—լույսի, խոնավության և հողի համար: Բույսերի համակցությունը. անտառում: Անտառի կենդանիները:

բ) Անտառի վնասատուներն ու պահպանները (կեղևավակեր բզեզներ, վորդեր, փայտփոր):

գ) Անտառային ծառերի մշակումը մեր շրջանում:

դ) Ում են պատկանում անտառները: Անտառների պահպանությունը և նրանց նշանակությունը. պայքար անտառի վնասնալից գետնի: Անտառների տարածությունը մեր շրջանում և Հայաստանում (զիտել և նշանակել քարտեզի վրա):

ԹԵՄԱՅԻ ԲԱՅԱՏՐԱԿԱՆԸ

Անտառային տնտեսություն խոշոր նշանակություն տալով անտառային շրջաններում, յերեխաներին այս թեման պետք է պարզի՝ ինչու խորհրդային իշխանությունը պահպանում է անտառներն անխնայ վնասնալից:

Տ. Ծառատունկի տուն

Ծառատունկի տունը մեր ծառաբուծի յերկրում դպրոցը պետք է անցկացնի առանձին շուքով, տալով նրան լայն հասարակական պրոպագանդայի բնույթ:

Դպրոցը նախորդ պետք է ձեռք բերի տուններ, ուր հնարավոր է, պետք է ունենա սեփական տնկարան:

Նախորդ հողաբաժնի և դյուրությունի հետ պետք է պլանավորել ծառատնկման շրջանները, վորոշել դյուրի հասարակական այգու տեղը, վորոշել այն ճանապարհները, առուները, վորոնց ափերը պետք է ծառեր տնկել:

Բացի պտղատու ծառերից, անհրաժեշտ է տնկել և անտառային տեսակներ և դեկորատիվ ծառեր: Առանձին կուլտուրական նշանակություն պետք է ունենան ծաղկանոցները, վորով նույնպես պետք է դրադի դպրոցը:

Դպրոցական հողամասը յենթարկելով հատակադժման, անհրաժեշտ է աստիճանաբար ծածկել այն ծաղկանոցներով, մշակույթի դանազան տեսակներով, վորոնք շրջանում պետք է տարածել. բոլոր ազատ տեղերը, ինչպես և հողամասի սահմանները ծառեր պետք է տնկել:

Այս աշխատանքների թե ծրագրման և թե իրագործմանը յերեխաները պետք է մասնակցեն:

Ծառատունկի աշխատանքների շարունակությունը պետք է լինի տունների խնամքը և պահպանությունը, վոր իր վրա պետք է վերցնի դպրոցը:

Դպրոցի հասարակական աշխատանքների մեջ ծառատունկը նշանակալից տեղ պետք է բռնի:

Դ. ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏԱՐՎԱ ԲՈՒՈՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՏՈՆԵՐԻՆ

Հեղափոխական տոնին մասնակցելիս յերեխաները պետք է ունենան հատուկ գաղափար այդ տոնի մասին:

Տոնի ուր կամ նրա նախորդակին յերեխաները ընթերցանության, գրամատիցայի, գրույցի և հանդեսի միջոցով, պատի լրագրերում լույս տեսնող հոգվածներով պարզվում են տոնի հետ կապված դեպքերը և տոնի նշանակությունը:

Յերեխաները մասնակցում են հասակավորների յերթին և հանդեսներին:

ՅԵ. ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

1. Մեր շրջանի բնության, աղգարնակության, տնտեսության առանձնահատուկ կողմերի մատնանումը:

2. Խորհրդային իշխանությունը որդանները դյուրում և շրջանում:

3. Հայաստանի քարտեզի վրա ցույց տալ գլխավոր լեռնաշղթաները, գետերը, Սևանա լիճը, գլխավոր ճանապարհները, քաղաքները և գավառները: Տնտեսության հիմնական ճյուղերը և նրանց շրջանները Խ. Հայաստանում: Հայաստանի սահմանամերձ պետությունները—ցույց տալ քարտեզի վրա:

4. Ինչ գրքեր կարդացինք տարվա ընթացքում, ինչ նյութերի մասին գրեցինք, ինչ նկարեցինք, ինչ երգերի տեքստեր կատարեցինք, ինչ աշխատանք կատարեցինք դպրոցի տնտեսության մեջ, ինչ ենք արել դյուրի համար:

5. Ինչ ենք անելու ամառը: Յեղանակի որագիր կազմելու, բույսերի և կենդանիների կյանքը դիտելու, բնությունը պահպանելու, ընտանիքի գյուղատնտեսական աշխատանքներին մասնակցելու և գյուղի աշխատանքները դիտելու ծրագիր կազմել: Ինչ պետք է կարգանք, ինչի մասին պետք է դրենք: (Համաձայնեցնել ամառային աշխատանքները պիտներական կազմակերպության հետ):

Տարեվերջի հանդես և ցուցահանդես: (Տես Ա. խմբի ծրագրում):

ԾՐԱԳԻՐ 4-ՐԴ ԽՄԲԻ

Դ. խմբի ծրագիրը նպատակ ունի մի կողմից ամփոփելու նախորդ տարիներում ստացված դիտելիքները և մյուս կողմից յերևույթների առաջ ծավալելու խորհուրդների յերկրի ամբողջ պատկերը, ամրացնելու նրանց մեջ խորհրդային հանրապետության քաղաքացու դիտակցությունը: Յեթե առաջին յերեք տարում աշակերտը յերևելով իր կոնկրետ չրջապատից դադարի և կազմում խորհրդային Հայաստանի բնության, տնտեսության և քաղաքական կյանքի մասին, ապա չորրորդ տարում, նա հենված այդ դադարիների վրա յայնացնում է իր աշխարհայացքը մինչև ԽՍՀՄ: Այստեղ յերևույթների առաջ դրվում է առաջին անգամ իր ամբողջ ծավալով հիմնական այն խնդիրը, վոր սոցիալական դաստիարակության այսորվա եյությունն և կազմում՝ այն և ԽՍՀՄ—համաշխարհային նշանակությունը, իրեն ուրույն սոցիալ-տնտեսական սիստեմի, վոր հակադրվում է մնացած բոլոր յերկրներին: Նրա դարգացման հետագա ուղիները—սոցիալիզմի կառուցման գործում, կապիտալիստական չրջապատման պայմաններում: Այս հարցերն են, վոր բոլոր կոմպլեքսների մեջ առանցքային դեր ունեն: Յեվ այս Փոնի վրա յե, վոր հետզհետե աշակերտը պարզելու յե իր ապագա հասարակական դիրքը, չրջապատի իրական պայմաններում: Այդ պայմանները այն գյուղը կամ քաղաքն և, վորտեղ նա այսոր ապրում է և դաստիարակվում, հասակավորների պայքարին մասնակցելով:

Ուստի այն բոլոր բնական և հասարակական յերվույթները, վոր ուսումնասիրվելու յեն, իրանց յայն և ընդհանուր դրումով միշտ ել պետք է կոնկրետ արտահայտությունը գտնեն յերեսայի չրջապատում: Ուսուցչի ոգնությունը պետք է կայանա նրանում, վոր ոգնի աշակերտին իրական չրջապատում վորոնել և պարզարանել ուսումնասիրվող հարցերի անդրադարձումը:

Ա. ԻՆՉ ԵՆՔ ԱՐԵԼ ԱՄՌԱՆԸ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼՔ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՅՍ ՏԱՐԻ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ

1. Վերականգնել աշակերտական կազմակերպությունների աշխատանքները

2. Պատմել և գրի առնել ամրան կատարած աշխատանքները, վոր ծրագրել եր խումբը անցած տարեվերջին:

3. Կազմել այս տարի կատարելիք աշխատանքների լավ անցնելիք նյութի ծրագիրը (ընդհանուր գծերով):

4. Բնության տեական դիտողությունների կազմակերպումը (միջնորդարանական դիտողություններ՝ քամի, ամպամածություն, տեղումներ,

Ջերմություն, աստղաբանական դիտողություններ՝ գիշերվա և ցերեկվա տե-
վողությունը, արեվի դիրքը յերկնքում, աչքի ընկնող ամենափայլուն աստ-
ղերը և համաստեղությունները. ֆենոլոգիական դիտողություններ՝ բույսե-
րի և կենդանիների փոփոխությունները ըստ սեզոնների) :

5. Գաղափարական աշխատանքների կազմակերպումը (ամբողջ տար-
վա ընթացքում պիտի ժողովել չրջանի հոգերի, բույսերի և կենդանիների տե-
սակները, գործիքների մոդելները, աղագրականության կենցաղի ու սովորու-
թյունների նկարագիրը, ժողովրդական յերգերի, ասացվածքների ավանդու-
թյունների նմուշները-չրջանի անտեսական հասարակական կյանքին վերաբե-
րող նյութեր, շինարարության, լուսավորության, առողջապահության և
այլն վերաբերող թվեր, չրջանի հեղափոխական անցյալի պատկերներ : Այդ
նյութերը պիտի ոգտագործվեն տարվա մեջ անցնելիք թեմաները լուսարանե-
լու համար) :

6. Ինչ արտադրական և հասարակական աշխատանքներ և կատարելու մե-
խուսքը գաղութում և գյուղում (կամ քաղաքում) : Ինչպես կազմակերպենք
այդ աշխատանքները : (Ում ոգնությունը խնդրենք և ում ինքներս ոգենենք) :

7. Բերքի տոնին մասնակցելու նախապատրաստություն : Դպրոցի բերքը
ժողովելու աշխատանքները : Ոգնություն աշակերտներին և չքավոր տնտե-
սություններին աշնանային աշխատանքներում : Բերքի տոնին ցուցադրելիք
նյութերի բնորոշություն : Դպրոցը ղեկավարելու յե աշակերտների ընտանիք-
ները բերքի տոնին մասնակցից դարձնելու գործը :

Բ. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒ- ԹՅՈՒՆ

1. ՅԵՐԿՐԻ ԳՆԴԱՁԵՎՈՒԹՅՈՒՆԸ

ա) Գլորուսն իրերվ յերկրի փոքրացրած պատկեր : Գիշերվա և ցերեկվա
պատճառը (յերկրի պտույտն իր առանցքի շուրջը) : Տարվա յեղանակաների
պատճառը, (յերկրի պտույտը արեվի շուրջը, յերկրի առանցքի դիրքը այդ
պտույտի ժամանակ) : Յերկրի զանազան մասերը անհավասար են տաքանում :
Կլիմայական գոտիներ : Բեվեռներ և հասարակած : Մենք վոր գոտումն ենք
ապրում : Աշխարհի կողմերը. հորիզոն : Յերկրի քարակղը (կիսագնդեր) .
Գաղափար աշխարհագրական ցանցի մասին :

բ) Ջրերի և ցամաքների բաշխումը յերկրագնդի վրա . մայր ցամաքներ
և ովկիանոսներ : ԽՍՀՄ յերկրագնդի վրա ինչ տարածություն և բռնում (գլո-
բուսի և կիսագնդերի քարտեզի վրա ցույց տալ) : ԽՍՀՄ ծովերը և ովկիա-
նոսները, գլխավոր ղետերը և լճերը : Կովկասյան, Ղրիմի, Թուրքեստանի,
Ուրալի և Միբիրի գլխավոր լեռնաշղթաները : Գլխավոր դաշտավայրերը :
ԽՍՀՄ բնական մասերը (Յեվրոպական, Ասիական՝ Միբիր-Թուրան-Կովկաս :
ԽՍՀՄ Միութենական հանրապետությունները (ցույց տալ քարտեզի վրա) :

2. ԱՆԴՐԿՈՎԿԱՍԸ, ՆՐԱ ԴԻՐՔԸ, ԲՆՈՒԹՅՈՒՆԸ, ԱԶԳԱՅՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ - ՍՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՈՒ ԿԵՆՑԱՂԸ

ա) Գլորուսն և ԽՍՀՄ-ի քարտեզի վրա տեսնել Անդրկովկասի դիրքը և
ասհմանները : Վոր կլիմայական գոտում և գտնվում Անդրկովկասը :

բ) Անդրկովկասի ծովերը, գլխավոր ղետերը, լճերը, լեռնաշղթաները,
հովիտները և սարահարթները : Անդրկովկասի կլիմայական չրջանները (ա-
րեվմայան, արեվելյան և հարավային) : Կլիմայական ուղղաձիգ գոտիները
մեկնում :

գ) Պարզել մեր բնակավայրի տեղը քարտեզի վրա : Աշխարհի կողմերով
պարզել Անդրկովկասյան ծովերի, լեռների, ղետերի դիրքը մեր բնակավայրի
նկատմամբ . մեզնից ղետի վոր կողմն են գտնվում Վրաստանը և Ադրբեջանը :
Մեր չրջանի կլիմայական պայմանները համեմատել Անդրկովկասի մյուս
վայրերի կլիմաների հետ :

դ) Անդրկովկասի բույսերը ըստ կլիմայական չրջանների : Անտառային
չրջանները : Վայրի կենդանիները Անդրկովկասում : Գյուղատնտեսական
չրջանները Անդրկովկասում . ա) բամբակագործական, բ) ալիգործական,
գ) թեյի, դ) հացահատիկների, յե) ձկնորսական, ղ) անասնապահական .

յե) Մեղվաբուծական, ղերամապահական չրջանները . բերքի տոնին ծա-
նոթանալ Անդրկովկասի անցյալ տարիների գյուղատնտեսական յեկամուտին :
Պատկերներ Անդրկովկասի ժողովուրդների կյանքից (որինակ՝ Մուղանի դաշ-
տում, Սվանեթիայում, ծխախոտի արտում, ձկնորսները Կասպյան ծովում,
քոչվորները յայլայում, կյանքը Կախեթիայում և այլն) : Ինչ և արտահանում
Անդրկովկասը և ինչ և ներմուծում : Արտահանման միջոցները-յերկաթուղի,
գլխավոր ծովերը, քաղաքները՝ Բաթում, Փոթի, Բագու, Թիֆլիս, Լենինա-
կան, Յերեվան, Գանձակ, Քութայիս (ցույց տալ քարտեզի վրա) :

3. ԿՅԱՆՔՆ ՈՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԽՍՀՄ-Ի ԶԱՆԱԶԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

ա) Քարտեզի վրա և նկարներով ծանոթանալ ԽՍՀՄ-ի զանազան գյու-
ղատնտեսական չրջաններին : Վորտեղ են ցանում ցորեն, յեգիպտացորեն,
տարեկան, կորեկ, գարի, վարսակ, վուշ, կանեփ : Ծանոթանալ այդ բույսերի
հոգին և կլիմայական պահանջներին :

Վոր չրջաններում են պարագում անասնապահությունը . բացիոնալ ա-
նասնապահություն-քոչվորական անասնապահական չրջանները ԽՍՀՄ-ում :

բ) Տափաստանային գոտի, գյուղատնտեսությունը, բնակիչներն ու նը-
բանց կենցաղը : Պատկերներ Ղրիմի, Ուկրաինայի, Հյուսիսային Կովկասի :
կենտրոնական սևվահողային գոտու, ստորին Վոլգյան և Միբիրի սևվահո-
ղային տափարանի գյուղացիների կյանքից : (Այդ չրջանները ցույց տալ քար-
տեզի վրա) :

Հարավի ծովեզերյա առեվտրական քաղաքները-Ուգեսսա, Սևվաստապոլ,
Ռոստով, Նովորոսիսկ :

Հարավ-արեվելքի կիսանապատային չրջան-Կիրգիզիա-անապատային
չրջան . Թուրքեստան, բամբակի անտեսություն չրջանը Թուրքեստանում :
Պատկերներով տալ այս չրջանների լանդշաֆտները և ժողովուրդների կյանքը :

գ) Խոտն անտառների գոտին . նրա բնակիչները, ղրագմուռը և կեն-
ցաղը :

դ) Գյուղատնտեսություն ձեվերը այլ յերկրներում տալ՝ համեմատելով
ԽՍՀՄ-ի հետ . որինակ բամբակի արտը Յեգիպտոսում և լնդկաստանում -
անասնապահությունը Ամերիկայում և Ավստրալիայում . հոգի մշակույթները

Միացյալ Նահանգներում. դյուղացու աշխատանքը Դանիայում, կամ Հոլլանդիայում. խաղողի մշակութունը Ֆրանսիայում և այլն:

յե) Հյուսիսային շրջանները: Անտառները հյուսիսային Ռուսաստանում և Սիբիրում. վորսորդություն. վորսորդների կենցաղի պատկերներ: Անտառային տնտեսության նշանակությունը: Ինչ գործադրություն ունի փայտը (չինարարական նյութ, վառելիքայտ, կարասիք, թուղթ և այլն): Անտառային տնտեսության կենտրոնները (Արխանգելսկ, Մուրմանսկ):

Հյուսիսային ժողովուրդների կյանքը—յեղջերաբուծություն և ձկնորսություն:

Բեվեռային յերկրների ճանապարհորդությունները—Նանսեն, Ամունդսեն: Բեվեռների դյուղը:

ԽՍՀՄ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

ա) Հայաստանի և Անդրկովկասի լեռնային հարստությունները—պղինձ, քարածուխ, մարգան, նավթ, աղ, շինարարական քարեր: Ծանոթանալ մեր յերկրի գլխավոր հանքերին: Կյանքը հանքահորերում. նավթի արտադրությունը. նավթի թորման գործարանը. կյանքը գործարանում (պատկերներ): Ինչպես են գոյացել մեր լեռները, հրաբուխ և յերկրաշարժ: Զերմությունը յերկրի խորքերում:

ա) Հայաստանի և Անդրկովկասի լեռնային հարստությունները—պղինձ, (Ուրալ) վոսկի և արծաթ (Սիբիր):

Մետաղադյունաբերության գլխավոր կենտրոնները (Լենինգրադ, Սուրամոլո, Տուլա, Ստալինո): Ինչու հարկավոր է վոր մեքենաները մենք չենք և վոչ թե ստանանք կապիտալիստական յերկրներից:

Կենտրոնական արդյունաբերական շրջան (Մոսկվա, Իվանովո-Վոդնասենսկ, Տվեր) Վլադիմիր, Յարոսլավլ):

դ) Կյանքը մանագործարանում: Անդրկովկասի մանագործարանները՝ րամրակիր-բրդի, սրանց նշանակությունը մեր տնտեսության համար:

դ) Մեքենայի նշանակությունը մարդու համար: Ծանոթանալ շարժիչ մեքենաների կազմության. շողմեքենայի դյուղը: Վառելանյութերի տեսակները՝ նավթ, մազութ, բենզին, քարածուխ և փայտ:

յե) Զրի ուժեր—մեքենաները շարժելու համար: Անդրկովկասի Զրի ուժեր: Նրա նշանակությունը մեր արտադրության համար:

Ելեկտրական ուժ, ծանոթանալ ելեկտրական հոսանքի հետ. հոսանքի ձեւափոխություն՝ լույսի, շարժման, ջերմության. ելեկտրական: Անդրկովկասի Զրեկտրականները (Ձաղես, Յերիվան). ելեկտրականների դերը արդյունաբերության և դյուղատնտեսության մեջ: Վոլխոստոյ, Դնեպրոստոյ: Ինչ նոր ելեկտրականներ ենք մենք կառուցում (Զորոգեսի, Ինգուրի, Ռիոնի և Աջարիճղալի):

